Որեւէ կապ չունի ո՛չ այդ շարժման հետ, ո՛չ այդ տղայի բլոգեր լինելու կամ քաղաքական որեւէ թեմայի հետ: Շուտով այնպիսի մանրամասներ հայտնի կդառնան այս գործից, որ որեւէ մեկի մոտ կասկած չի մնա, որ քաղաքական ենթատեքստ չկա: Ուղղակի հիմա ժամանակից շուտ եմ համարում ավելի մանրամասն տվյալներ ներկայացնելը:

Կարդացեք՝ էջ 4

Ինկոլն էլ, հակառակի պես, ժամանակ չունի Ալիեւի պորտը տեղը դնելու: Վեհարանը Վեհի, հայ բուդուր, պատարագ... Հայ առաքելական եկեղեցու դեմ պայքար է առաջնորդում մարդը, ի՞նչ Ալիեւի ժամանակն է: Համ էլ՝ Ալիեւն ասաց, հո հենց վաղը չարե՞ց: Կխոսի, կխոսի, հետո կտեսնի, որ իրենից ավելի լավին չի ճարում, կսկսի աջակցել:

Կարդացեք՝ էջ 5

Մարդիկ թշվառ վիճակում են, չգիտեն՝ վաղն ինչպես են հայթայթելու իրենց «հաց հանապազօրյան»: Մեր քաղաքացիների զգալի մասն աշխատող աղքատներն են, որովհետեւ նրանց նվազագույն աշխատավարձը, բոլոր օրենքներին հակասելով, հարկվում է, իսկ նվազագույն աշխատավարձը որեւէ երկրում չեն հարկում. դա գոյատեւման աշխատավարձ է:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 175 (4077), 5 նոյեմբեր, չորեքշաբթի, 2025

www.hraparak.am

Նախընտրական աժիոտաժ է սկսվել ոչ միայն իշխանության թիմում, այլեւ՝ ընդդիմադիր շրջանակներում: Օրինակ, Ռոբերտ Քոչարյանի թիմում այս պահին քննարկման ամենաակտուալ հարցն այն է, թե ով է գլխավորելու նախընտրական ցուցակը: Թեպետ Ռ. Քոչարյանն իր վերջին ասուլիսում պատասխանեց այդ հարցին՝ որ դա կախված կլինի նրանից, թե, ըստ սոցիոլոգիական տվյալների, ով կունենա առավելագույն հնարավորություն, այսինքն՝ ամենաբարձր ռեյտինգը: Եվ ասաց, որ այդ հարցի պատասխանը կունենան հունվար-փետրվարին: Սակայն նրա թիմակիցներին, պարզվում է, այդ հարցը հանգիստ չի տալիս: Ոմանք կարծում են, որ չնայած 2-րդ նախագահի վարկանիշը մինչ այս պահը ամենաբարձրն է իրենց թիմում, սակայն նա էստաֆետը հանձնելու է որդուն՝ Լեւոնին, որն արդեն քանի տարի է՝ քաղաքականության մեջ է, ԱԺ պատգամավոր է: Դրան նպաստում է նաեւ այն, որ Լեւոն Քոչարյանը վերջին ամիսներին մարզերից տուն չի գալիս՝ շարունակ հանդիպումներ է ունենում մարդկանց հետ: Այս ընտրություններին չեն կարող նախորդ սցենարը կրկնել, երբ ցուցակը գլխավորում էր երկրորդ նախագահը, իսկ որդին 50-րդն էր, հասկանում են, որ նախկին՝ 2021-ի ցուցանիշը չեն գրանցի, իսկ այդ դեպքում կոռեկտ չի լինի առաջին անցողիկ տասնյակում ընդգրկել թե՛ հոր, թե՛ որդու անունները:



Հետաքրքրություն Նիկոլ Փաշինյանի եւ նրա հավատավոր մի քանի յուրայինների, պարզվում է, ՔՊ-ում շատերն են վախենում Աստծո նզովքից, եւ հենց սա է պատճառը, որ ինչքան էլ Փաշինյանի պարտադրանքը եւ նրան հաճոյանալու ցանկությունը մեծ են, չեն մասնակցում կարգալույծ քահանայի մատուցած ֆեյք պատարագներին: ՔՊ-ական պատգամավորներից մեկը մեզ հետ զրույցում անկեղծացավ, որ ինչքան ուզում են իրենց սպառնան, պարտադրեն, խնդիրը ոչ թե այն է, որ չեն կիսում Փաշինյանի հակակաթողիկոսական արշավը, այլ իրականում վախենում են Աստծո անեծքից: Գաղտնիք չէ, որ Հովհաննավանքի պղծության առաջին արարից հետո Փաշինյանը հրահանգել է հաջորդ կիրակի հնարավորինս բազմամարդ մասնակցություն ապահովել, սակայն երկրորդ անգամ ավելի քիչ էին մարդիկ: Իսկ նրանք, ովքեր էլ չեն վախենում Աստծո պատժից ու անեծքից, հասկանում են, որ Փաշինյանի խնդիրն իրականում Եկեղեցին մաքրելը չէ, ինչի մասին այդքան թմբկահարում է: Եթե Եկեղեցու մաքրությունը գերնպատակ լիներ, ապա Հովհաննավանքում կարգալույծ քահանան պատարագ չէր մատուցի, իսկ նրան օգնող դպիրներն ու հոգեւորականներն էլ ատամնաբույժ կամ հայհոյանք գրող ստատուսչիկներ չէին լինի:

Լեզուն եւ լեզվին տալը

Ասում են՝ ինչո՞ւ է Ալիեւը Սեւանը Գյոյչա կոչում, մի կարկառուն ՔՊական պատասխանում է՝ ներքին աուդիտորիայի համար է անում. ադրբեջանցիներին է ուղղված: Հարց է ծագում՝ իսկ դուք ներքին աուդիտորիա չունե՞ք: Դուք ձեր ներքին աուդիտորիային սիրաշահելու, նրա ազգային արժանապատվությունը շոյելու, նրա առաջ պատիվ ու թասիբ ունեցող իշխանություն երեւալու խնդիր չունե՞ք: ՔՊ առաջնորդն ավելի հեռուն է գնում, ասում է՝ բա դուք էլ ամբողջ օրը Արցախ-Արցախ եք ասում, «խեղճ ադրբեջանցիները» ո՞նց դիմանան՝ եթե դուք Արցախ եք ասում, նրանք էլ պետք է Գյոյչա ու Բասարգեչար ասեն: Էստեղ դժվար է չհայհոյել, բայց փորձենք քաղաքակիրթ ճանապարհով տարրական բաներ չհասկացող այս ազգակործաններին մի քանի բան բացատրել: Բասարգեչար երբեմն հայերն էլ են ասում, մանավանդ՝ տարեցները: Առհասարակ՝ մեր լեզվում լիքը ադրբեջանա-թուրք-պարսկական տերմիններ ու բառեր կան, ինչպես եւ թուրք-ադրբեջանական բառապաշարում լիքը հայկական բառեր կան. իրար կողքի ապրող ժողովուրդները սովորաբար լեզվական փոխանակումներ են անում: Ասենք, ֆրանսիացիների, գերմանացիների, իտալացիների լեքսիկոնում էլ անհաշիվ փոխառություններ կան, բայց ոչ մեկը չի մտածում, որ բառերի ու տեղանունների նույնականությունը զավթողական քաղաքականության, մեկը մյուսին ոչնչացնելու մտադրությունների ապացույց է: Ադրբեջանի պարագայում «Գյոյչան» համակցված է բազում այլ դրսեւորումներով, որոնք վկայում են այդ երկրի ագրեսիվ, հակահայկական մտադրությունների մասին: Ինչ վերաբերում է Արցախ տեղանունը կիրառելուն: Որ դու եւ քո կիրթ «յոլդաշը» երկինք էլ թռչեք, իջնեք գետնին, միեւնույն է՝ Արցախը հայկական է, հայերն այնտեղ բնակվել են անհիշելի ժամանակներից, եւ ոչ մի թուրք զավթիչ կամ հայի դավաճան չի կարող դա փոխել:

Ինչպես գրել էինք, իշխանությունը հրատապ ռեժիմով շարունակելու է կյանքի կոչել նախընտրական, պոպուլիստական նախագիծը՝ զինվորական ծառայությունը 2-ից 1,5 տարի դարձնելու վերաբերյալ: Նախագիծն արդեն ուղարկվել է խորհրդարան եւ քննարկվելու է եկող քառօրյա նիստերի ընթացքում: Սակայն իշխանությունը սրանով չի սահմանափակվելու՝ իշխանականներն առաջիկա ամիսներին մտադիր են հանդես գալ նմանատիպ այլ ամբոխահաճո նախաձեռնություններով: Օրինակ, մեզ ասացին, որ քննարկում են նաեւ պարտադիր զինվորական ծառայության տարիներն իբրեւ աշխատանքային ստաժ հաշվարկելու հարցը, եւ նախագծի տեսքով դա նույնպես կներկայացվի խորհրդարանի ընդունմանը:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱՇԻՐԻՄՈՒՄ ԱՆԵԼՈՒ

Երեւանի քրեական դատարանում՝ դատավոր Կարեն Ֆարխոյանի նախագահությամբ, նոյեմբերի 10-ին կշարունակվի 24 տարի առաջ տեղի ունեցած Պողոս Պողոսյանի սպանության գործի քննությունը: Հանրային մեղադրողը 2 միջնորդություն է ներկայացրել դատարան՝ կրկնակի դատաբժշկական փորձաքննություն եւ դիակի արտաշիրիմում կատարելու, եւ այդ օրը դատարանը պետք է որոշի՝ բավարարե՞լ դատախազի միջնորդությունները, թե՞ ոչ: Մեղադրյալ Աղամալ Հարությունյանի պաշտպան Ռոբերտ Բեջանյանը մեզ ասաց, որ դատարանը չի կարողանում որոշել՝ բավարարել, թե ոչ, ինքը կանխատեսում է, որ, ամենայն հավանականությամբ, կմերժի. «Պողոս Պողոսյանը հուղարկավորված է Վրաստանում, ինչպե՞ս պետք է այնտեղ արտաշիրիմում իրականացվի՝ այլ երկրի տարածքում, արդյոք դրա իրավասությունն ունե՞ն: Մեկ անգամ՝ 2021 թվականին, դիակի փորձաքննություն իրականացվել է, եզրակացվել է, որ ընկնելու հետեւանքով է մահը վրա հասել, հիմա ոսկորներն են մնացել... Պարզապես ուզում էին ինտրիգ առաջացնել, նույնիսկ վարչապետն է այդ մասին ելույթ ունեցել Ազգային ժողովում»: Հիշեցնենք, որ Պողոս Պողոսյանը սպանվել է 2001 թ. սեպտեմբերի 25-ին: Այդ օրը Ռոբերտ Քոչարյանը՝ Շառլ Ազնավուրի հետ, այցելել էր «Առագաստ» սրճարան: Ըստ գործի տվյալների, Պողոսյանը, նրան տեսնելով, ասել է՝ «պրիվետ, Ռոբ», ինչից հետո Քոչարյանի թիկնապահները նրան տարել են զուգարան եւ ծեծել, որի ժամանակ էլ նա վայր է ընկել, գլխով հարվածել զուգարանակոնքին ու մահացել: Իրավապահները դա որակել էին որպես անզգույշ սպանություն եւ թիկնապահ Աղամալ Հարությունյանին (այժմ՝ հանգուցյալ)՝ «Կուկու» մականունով, դատապարտել պայմանական ազատազրկման: Նիկոլ Փաշինյանի՝ իշխանության գալուց հետո գործը վերաբացվեց, դեպքի ականատես Սթիվեն Նյուտոնի նամակը նոր երեւան եկած հանգամանք դիտարկեցին:

ԱՐՑԱԽ

ԵԹԵ ՀԱՅԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՉԿՌՎԻ, ՈՒՐԻՇՆԵՐՆ ԵՆ ԿՌՎԵԼՈՒ ՄԵՐ ՀՈՂԵՐԻ ՀԱՄԱՐ

Գնդապետ **Արթուր Ալեքսանյանը՝ Ամարասի Արթուրը**, մասնակցել է արցախյան պատերազմներին, վնասվածքներ է ստացել: Նա «Հրապարակին» պատմում է, որ, լինելով արցախցի, այժմ իր կյանքն ու ժամանակը նվիրել է բռնի տեղահանված մեր հայրենակիցներին օգնելու գործին: Նա նշում է, որ արցախցիներին օգնում է բնակարաններ կառուցելու եւ բարեկեցիկ կյանք ստեղծելու հարցերում: Ալեքսանյանի խոսքով՝ այժմ արցախցիներն ունեն մեր աջակցության կարիքը, խոսքը ոչ միայն նյութական օգնության մասին է, այլեւ՝ հոգեբանական:

- Ի՞նչ օգնության մասին է խոսքը:

- Ղարաբաղցիների համար բարեգործական ծրագիր եմ իրականացնում: Տներ եմ կառուցում նրանց համար, այս պահին՝ Ապարանում, Ծաղկահովիտում, հետո այլ շրջաններ ենք գնալու:

- Ի՞նչ բարեգործություն է դա, ո՞վ է ֆինանսավորում:

- Ղարաբաղցիներին հատկացված միջոցներով օգնում ենք մարդկանց, որպեսզի կարողանան մի բան կառուցել: Ես՝ ինքս, էստեղից-էնտեղից փողեր եմ հայթայթում, գումարներ եմ խնդրում, եւ տարբեր աշխատանքներ ենք իրականացնում: Մարդկանց ուղղորդում ենք, թե որտեղ ինչ կարելի է կառուցել, ինչպես նաեւ՝ մարդկանց աշխատանքով ենք ապահովում: Մարդկանց հավաքագրում ենք, շուտով շինարարական աշխատանքներ պետք է սկսենք:

- Իսկ ի՞նչ ֆինանսական միջոցներով:

- Ֆինանսական հիմնական միջոցները սերտիֆիկատներն են, որոնք հատկացրել են մարդկանց, խոսքը չորս միլիոնանոց, հինգ միլիոնանոց, երեք միլիոնանոց սերտիֆիկատների մասին է, մնացած կազմակերպչական ծառայությունները մենք ենք հոգում, մեր սեփական միջոցներով, որպեսզի կարողանանք ամեն ինչ կազմակերպել:

- Կազմակերպչական ի՞նչ հարցեր կան:

- Հողերի չափագրում, հավաքագրումներ: Պատվերներ ենք տալիս, օֆիսային ծախսեր ենք հոգում, ինտերնետ կապեր եւ այլն:

- Քանի՞ արցախցու եք օգնել:

- Մոտ 150 ընտանիքի: Պատրաստ ենք արդեն շինարարություն սկսել Ապարանում:

- Ինչպե՞ս որոշեցիք արցախցիների հարցերով զբաղվել: Պետությունն ասում է՝ մենք ամեն ինչ անում ենք Արցախի ժողովրդի համար:

- Ես ղարաբաղցի եմ, սաղ գերդաստանս տեղափոխվել է այստեղ: Ինձ դիմել են օգնության համար, միտքս եկավ, որ եթե մերոնց համար անում եմ, պիտի բոլորի համար անեմ: Ինչ մի հոգու համար արած, ինչ՝ տասը հոգու, տարբերություն չկա: Ամենածանր գործերը, ծավալուն գործերն արել ենք, վերջացրել, տեղական իշխանություններից թույլտվություններ ենք ստացել, պրոյեկտներ ենք պատվիրել: Չորս շենքի պրոյեկտ եմ պատվիրել, արդեն պատրաստ է:

- Արցախցիները դժգոհում են սոցիալական ծրագրերից, որոնք պետությունն է տրամադրում: Ի՞նչ կասեք այդ մասին:

- Իրոք՝ դժգոհելու տեղ շատ կա, որովհետեւ գումարը քիչ է: Մի շնչի համար չորս միլիոնը շատ քիչ գումար է: Էդ փողով ի՞նչ կարող են գնել՝ ո՞չ կահույք, ո՞չ պետքական այլ իրեր: Ամենավատն այն է, որ այդ չորս միլիոնն էլ հեռու տեղերում ապրողներին են տրամադրում: Երեւանի եւ հարակից տարածքների բնակիչներին տրամադրում են ընդամենը երեք միլիոն: Մարդիկ մտածում են՝ գնան շրջաններ, ինչո՞վ զբաղվեն: Հո բոլորը մասնագիտությամբ գյուղատնտես չե՞ն: Բայց ամեն դեպքում ես իմ խնդիրը կոնկրետացրել եմ, ինձ էդ քաղաքականությունը չի հետաքրքրում, զբաղվում եմ կոնկրետ խնդիրներով:

- Ո՞ւմանք կարծում են, որ արցախցիները մի օր կարող են վերադառնալ իրենց երկիր եւ խաղաղ ապրել ադրբեջանցիների հետ: Ի՞նչ եք կարծում՝ կարո՞ղ է նման բան լինել:

- Աստված մեծ է, ինչո՞ւ ոչ, ամեն ինչ էլ հնարավոր է:

- Բայց կարո՞ղ են ադրբեջանցիների հետ ապրել:

- 70 տարի ապրել ենք, որ պետք լինի, էլի կապրենք: Բայց նայած թե ինչ պայմաններում: Առաջնահերթ պահանջն անվտանգությունն է: Եթե այն ապահովվի, ինչո՞ւ չէ: Մեր լեզուն, մեր մշակույթը, մեր կրոնը եթե լինեն ազատ, ինչո՞ւ չէ: Ամեն ինչ էլ կարելի է, հո մինչեւ վերջ պատերազմ չի՞ լինելու:

- Իլհամ Ալիեւը ժամեր առաջ է հայտարարել, որ Սեւանա լիճ գոյություն չունի, այն իրենց լիճն է՝ Գյոկչա անվանումով:

- Մենք պիտի ավելի վեհ մեզ պահենք: Ալիեւ-մալիեւ՝ ինչ ուզում են, թող խոսեն: Մենք ոչ թե Ալիեւին պետք է քննադատենք, այլ՝ մեզ: Ալիեւը խնդիր է դրել իր առաջ եւ ամեն գնով փորձում է հասնել դրան: Այդ մենք պիտի ուժեղանանք, բարգավաճենք, հզորանանք, որ կարողանանք դիմադրել: Մեր երկրին ամեն ձեւի պետք է անկախություն ապահովենք:

- Փաշինյանի իշխանությունը զինվորական ծառայությունը դարձրեց 1,5 տարի՝ նախկին 2 տարվա փոխարեն: Այդպես հնարավո՞ր է հզորանալ եւ առաջ անցնել թշնամուց:

- Ես զինվորական եմ, բանակը շատացնեն, թե պակասեցնեն, բան չի փոխվելու, պիտի բանակի որակը փոխեն: Կրճատումը կարեւոր չէ, ես որակի կողմնակից եմ, թող քիչ լինենք, բայց՝ որակյալ, ուժեղ, մարտական: Տեխնիկան զարգացել է, ամեն ինչ զարգացել է աշխարհում, բայց մենք հետ ենք գնացել: Ես մարտական հատուկ նշանակության զորքի հիմնադիր-հրամանատար եմ, բայց իմ խնդիրները լուծել եմ փոքր քանակությամբ մարդկանց հետ: Քանակին երբեք ուշադրություն չեմ դարձրել: Թուրքերն են միշտ քանակին ուշադրություն դարձրել:

- Եթե քանակն էական չէ, ինչո՞ւ են մարդկանց պարտադրում՝ տունտեղ, աշխատանք թողնել եւ մասնակցել վարչական հավաքներին:

- Երկու տարի է՝ ես ամեն ինչից հեռացել եմ: Եթե մի բան փոխում են, պետք է անպայման լրացնել այն:

- Բոլորն ուզում են, որ բանակն ուժեղանա, բայց ինչպե՞ս:

- Մարտական պատրաստակամությունը, մարտական ոգին: Զինանոցում պետք է լինեն ամենաարդիական զենքերը, այդ քոստ, էժան զենքերը չպետք է հավաքենք, բերենք Հայաստան: Ամեն ինչ պետք է լինի որակյալ: Հայ ազգը միշտ էլ հայրենիքի համար ոտքի է կանգնել: Ով էլ որ իշխանության գլխին լինի, մեկ է՝ մեր ազգը ծանր պահերին ոտքի է կանգնում: Միշտ էլ կռվողներ լինելու են: Եթե հայը Հայաստանի համար չկռվի, վստահ եղեք, որ ուրիշներն են կռվելու մեր հողերի համար:

- Արցախի համար էլ կռվեցին, բայց մեկ է՝ հանձնվեց:

- Այո, Արցախում լավ էլ կռվել են, կռվել է ողջ հայ ազգը, ոչ միայն ղարաբաղցիները: Պարզապես մենք շատ թույլ էինք տեխնիկապես: Մենք մի հատ դրոն չունեինք: Մեզ վերեւից էին խփում: Մենք թուրքի հետ այս անգամ չենք կռվել, մեզ խոցել են օդից:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱԽՏՈՅԱՆՆԵՐԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ՏԵՂԱՓՈԽԵԼ Է ԱՊԱՀՈՎ ՎԱՅՐ

Մերձավանում ապրող ՔՊ-ական Ախտոյանների գերդաստանին ու բարեկամներին վտարելու պահանջով գյուղացիները հոկտեմբերի 12-ին ստորագրահավաք էին անում գյուղում: Այդ օրը սկսված ակցիան, ինչպես տեղի բնակիչներն էին պնդում, կազմակերպիչ չուներ՝ ինքնաբուխ էր: Մարդիկ վրդովված էին իրենց համագյուղացու՝ Փարաքարի սիրված համայնքապետ Վալոդյա Գրիգորյանի սպանությունից, եւ բնական է, որ այդ զայրույթն ուղղված էր սպանության մեջ մեղադրվողների եւ նրանց ազգուտակի դեմ: Գյուղում լարված մթնոլորտ էր տիրում, եւ չէր բացառվում, որ կարող էին նոր ողբերգություններ լինել:

Փարաքար խոշորացված համայնքի բնակիչները որոշել էին, որ ստորագրահավաք անեն եւ դիմեն կառավարությանը, որ Ախտոյաններին վտարեն՝ հանեն հաշվառումից ու հեռացնեն համայնքից: Իհարկե, այս պահանջն օրինական չէր, եւ որոշ իշխանական պատգամավորներ անգամ կեղծ զայրույթով լայվեր էին մտնում, թե՝ դուք ով եք, որ նման բան պահանջեք, բայց մեր երկրում շատ քիչ բան է հիմա օրինականության շրջանակներում կատարվում, եւ մարդիկ էլ անզորությունից են հաճախ դիմում նման քայլերի:

«Հրապարակ»-ի տեղեկություններով՝ բնակիչների պահանջը կատարվել է, Ախտոյաններն ազգուտակով հեռացել են Մերձավանից: Մեզ պատմեցին, որ նրանց հեռանալուց տեղյակ է նախաքննական մարմինը՝ Քննչական կոմիտեն, եւ այդ ամենն «օրենսդրորեն է կատարվել»: Քննչական կոմիտեից հետաքրքրվեցինք, թե դա ինչ է նշանակում: ՔԿ-ից հաստատեցին մեր տեղեկությունը, սակայն մանրամասներ չներկայացրին, թե ինչպես է տեղի ունեցել Ախտոյանների մեկնումը, ինչ միջոցներով, ովքեր եւ ուր են տարել նրանց: Միայն ասացին, որ «քրեական վարույթի նախաքննության ընթացքում կիրառվել է անվտանգության միջոց: Անվտանգության տեսակի հետ կապված՝ չենք մեկնաբանում»:

Փաստաբան **Վահան Հովհաննիսյանը**, որը Վալոդյա Գրիգորյանի սպանության գործով մեղադրյալներից մեկի՝ Նարեկ Օհանյանի փաստաբանն է, ասաց, որ Քրեական դատավարության օրենսգրքով են նման հարցերը կարգավորվում, անվտանգության միջոցը կիրառում է նախաքննական մարմինը՝ ոստիկանության միջոցով:

Նշենք, որ Մերձավանի նախկին համայնքապետ, ՔՊ-ական Միհեր Ախտոյանը, որը Վալոդյա Գրիգորյանի սպանությունն օժանդակելու մեջ մեղադրվող Նարեկ Օհանյանի քեռորդին է, երկրում չէ: Նա դեռ Վ. Գրիգորյանի սպանությունից առաջ էր լքել Հայաստանի Հանրապետությունը եւ մինչ օրս չի վերադարձել: Հիշեցնենք, որ Մերձավանի իր տան դիմաց մոտ մեկուկես ամիս առաջ սպանված Վալոդյա Գրիգորյանի գործով երկու մեղադրյալ կա. մեկը Մերձավանի ՔՊ-ական նախկին վարչական ղեկավար Միհեր Ախտոյանի ազգականն է՝ Նարեկ Օհանյանը՝ որպես օժանդակող, մյուսը՝ բուն սպանության մեջ մեղադրվող 20-ամյա Գեւորգ Հարությունյանը: Իրավապահներն այս ողբերգությունը բացահայտված են համարում, ավելին՝ հայտարարել են, որ սա վրեժխնդրություն է՝ դեռ փետրվարին տեղի ունեցած սպանության համար, երբ Փարաքարի գյուղապետի եղբայրն ու եւս 13 հոգի գնացել էին Ախտոյանների տան վրա, կոնֆլիկտի արդյունքում սպանվել էր Ախտոյանների ազգականը՝ Գրիգոր Օհանյանը: Հենց նրա եղբայրն էլ՝ Նարեկը, այժմ մեղադրվում է Վալոդյա Գրիգորյանի սպանությանն օժանդակելու՝ պատվեր տալու համար: Ըստ նախաքննական վարկածի, գործ ունենք դասական վենդետայի հետ, երբ սպանվածի հարազատները վրեժ են լուծել իրենց ազգականի մահվան համար, սակայն, չգիտես ինչու, սպանել են միջադեպին մասնակցածներից մեկի եղբորը: Այն դեպքում, որ միջադեպին մասնակցած եղբայրն անգամ սպանության մեջ չի մեղադրվում:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՍԿԱՆԴԱԼ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐԸ ԶՈՀՈՒՄ ԵՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 28-30-ը Հայաստանում անցկացված Արեւելյան գործընկերության Եվրանեսթ խորհրդարանական վեհաժողովի շուրջ աղմուկը չի դադարում:

ՀՀ իշխանությունները, մի սկանդալից չպրծած, մյուսի մեջ են ընկել: Խորհրդաժողովի ընթացքում եվրոպացի պատգամավորի՝ ՀՀ իշխանությանն ուղղված ոչ ժողովրդավար գործողությունների համար կոշտ քննադատությունը դեռ չմարսած, իշխանականները ստիպված են հանդուրժել նաեւ հարեւան Վրաստանից հնչող կոշտ քննադատությունները, որոնք, ցավոք, հնարավոր է, որ սոսկ քննադատությամբ չավարտվեն, եւ վերջին ժամանակներում առանց այն էլ սրված հայ-վրացական հարաբերություններն ավելի վատ հունով գնան:

Թբիլիսիի դժգոհությունը, հիշեցնենք, հարուցել է Երեւանում Եվրանեսթի ընդունած բանաձեւը, որին կողմ են քվեարկել նաեւ ԵԽԽՎ հայ պատվիրակները՝ իշխանության ներկայացուցիչները: Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Նինո Ցիլոսանին մեղադրել է հայ պատգամավորներին՝ հայտարարելով, թե նրանք փաստացի դեմ են գնացել պաշտոնական Երեւանի դիրքորոշմանը:

«Հայաստանի վարչապետը պաշտոնական այցով Վրաստանում էր եւ տարբեր հանդիպումներ է ունեցել ժողովրդի կողմից ընտրված կառավարության հետ: Աջակցելով մի բանաձեւի, որը պնդում է, թե Վրաստանի կառավարությունը լեգիտիմ չէ, նրանք անվստահություն են հայտնում իրենց իսկ վարչապետին»,- ասել է վրացի պաշտոնյան՝ հավելելով, թե միայն իր բերած փաստարկը բավարար է՝ ցույց տալու, թե որքան իմաստազուրկ ու անբովանդակ է այդ բանաձեւը, որի միակ նպատակն է՝ հերթական աղյուսը դնել Վրաստանին վնասելու գործում: ՔՊ-ականներն արդարանում են, թե Երեւանում ընդունված բանաձեւը միայն Վրաստանի մասին չէ, «Արեւելյան գործընկերության ապագան եւ Եվրամիության ընդլայնման քաղաքականության նոր հեռանկարները, դեպի տարածաշրջանում խաղաղության, անվտանգության եւ կայունության անհրաժեշտություն» վերնագրով փաստաթղթում խիստ քննադատություն կա նաեւ Ալեքսանդր Լուկաշենկոյի ռեժիմի կողմից Բելառուսում բռնաճնշումների, հայ-ադրբեջանական խաղաղության, Ուկրաինա Ռուսաստանի ներխուժման մասին:

Արեւելյան գործընկերության Եվրանեսթ խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի պատվիրակության ղեկավար, ՔՊ-ական պատգամավոր **Մարիա Կարապետյանի** հիմնավորմամբ, իրենք հակավրացական բանաձեւին կողմ չեն քվեարկել: Ըստ Կարապետյանի, այդ բանաձեւը Հայաստանի համար կարեւոր դրույթներ է պարունակում, դիցուք՝ օգոստոսի 8-ին Վաշինգտոնում նախաստորագրված Հայաստան-Ադրբեջան խաղաղության պայմանագրին «աջակցություն հայտնող դրույթը, տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության հիման վրա ապաշրջափակման շուրջ վերահաստատված համաձայնությանն աջակցություն հայտնող դրույթը, Թրիփ նախագծին աջակցություն հայտնող դրույթը, սահմանազատման գործընթացի շարունակականության կարեւորությունն ընդգծող դրույթը, Հայաստանի ինքնիշխան տարածքից ադրբեջանական զորքերի դուրսբերմանը կոչ անող դրույթը, Ադրբեջանում պահվող հայ անձանց հարցը հասցեագրել պահանջող դրույթը»: Այսինքն, Հայաստանի պատվիրակությունը չէր կարող ձեռնպահ կամ դեմ քվեարկել մի բանաձեւի, որի մեջ կային նման դրույթներ:

Հայաստանյան պատվիրակության ընդդիմադիր ներկայացուցիչ, դաշնակցական **Արթուր Խաչատրյանն** ասում է, որ, իր գնահատմամբ, ընդունված բանաձեւում որեւէ հայամետ կետ չկար, որին պետք է կողմ քվեարկեին: Նա հիշեցնում է, որ ոչ միայն այդ բանաձեւին են կողմ քվեարկել, այլեւ ՔՊ-ի 4 պատգամավոր «դեմ» է քվեարկել ընդդիմադիր պատգամավորների եւ որոշ եվրոպացի գործընկերների՝ քաղաքական կոմիտեի զեկույցի փոփոխության առաջարկին, որով Եվրանեսթի վեհաժողովն Ադրբեջանից պահանջում էր անհապաղ եւ առանց նախապայմանների ազատ արձակել Բաքվում պահվող հայ գերիներին ու կալանավորված այլ անձանց, ինչպես նաեւ՝ միջազգային անվտանգային երաշխիքների ներքո ապահովել բռնի տեղահանված արցախահայերի հավաքական վերադարձն իրենց բնօրրան: Ինչից հետո պատվիրակության ընդդիմադիր անդամները՝ ինքը, Աննա Գրիգորյանը, Հայկ Մամիջանյանը, որոշել են չմասնակցել բանաձեւի քվեարկությանը: «Ինչ վերաբերում է բանաձեւում հայանպաստ կետերին, մենք այդտեղ որեւէ հայանպաստ կետ չենք տեսել»: Հարցրինք՝ միտումնավո՞ր են իշխանականները կողմ քվեարկել ոչ միայն հակառուսական, այլեւ հակավրացական բանաձեւին, ընդդիմադիր պատգամավորը հորդորեց իշխանականներից ճշտել:

Նա չցանկացավ կանխատեսում անել, թե ինչ հետեւանքներ կարող է առաջացնել ՀՀ իշխանականների այս քայլը, արձանագրեց միայն. «Ակնհայտ է, որ վրացական կողմը դժգոհ է»: Իշխանական կուլիսներում, մինչդեռ, սրտատրոփ սպասում են Վրաստանի հակաքայլերին, առնվազն հայ-վրացական սահմանին բեռնափոխադրման խոչընդոտների տեսքով, որը կարող է ծանր հետեւանքներ ունենալ ՀՀ տնտեսության վրա: Փաստորեն, մի կողմից թուրք-ադրբեջանական տանդեմն է փորձում Հայաստանը ջնջել քարտեզից, մյուս կողմից ՀՀ իշխանություններն իրենք են փչացնում տարածաշրջանում բոլոր հարեւանների հետ հարաբերությունները՝ մեզ զրկելով դաշնակիցներից եւ ուժեղացնելով մեր թշնամիներին:

Հիշեցնենք նաեւ, որ եվրոպական կառույցները Վրաստանի իշխանություններին քննադատող բազմաթիվ բանաձեւեր ու հայտարարություններ են ընդունել: «Վրացական երազանք»-ն ի սկզբանե էր բոյկոտել Եվրանեսթի երեւանյան հավաքը՝ խորհրդարանական պատվիրակություն չգործուղելով Հայաստան:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԿԻՐԱՆՑՈՒՄ ՈՉ ՄԻ ՄԵՏՐ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՉԻ ԱՐՎԵԼ

Տավուշում աշնանացան ցորեն ցանելու ամենահարմար ժամանակը սեպտեմբերի 15-ից մինչեւ հոկտեմբերի 10-ն է: Խորհրդային ժամանակ ամենաուշը հոկտեմբերի վերջին ցորենը ցանած էին լինում, որպեսզի հատիկը մինչեւ աշնանային ցրտերը ծլարձակեր, աճեր: Նոյեմբերն է, իսկ Կիրանցում ոչ մի մետր աշնանացան չի արվել: 2024-ին Կիրանցում հնձվել է 38 հեկտար աշնանացան ցորեն:

Անցյալ տարի սահմանազատման անվան տակ, միակողմանի ձեւով, ապօրինի կերպով Կիրանցից 15 հեկտար հողի հանձնումից հետո աշնանացանի գործը խիստ դժվարացավ: 2024-ին Կիրանցում մոտ 6 հեկտար աշնանացան ցորեն ու գարի էին ցանվել: Այս տարի, բացի Կիրանցի տնամերձ հողամասերից, գյուղում գարնանացան չի արվել: Կիրանցի բնակիչներից տեղեկացա, որ սահմանազատումից հետո լուրջ խնդիր է դարձել սահմանագոտու «Դզեր» տարածքում շուրջ 60 հեկտար հողերի մշակությունը: Այդ հողերից մոտ 40 հեկտարը պիտանի է աշնանացան ցորենի մշակության համար: Այս օրերին Կիրանց բնակավայրի վարչական ղեկավար Կամո Շահինյանի որդին՝ Շիրակ Շահինյանը, այդ տարածքում աշնանացանի համար տրակտորով վար է անում: Նա Կիրանցում աշնանացան մշակողներից է: Շիրակն իր տրակտորով վար է արել նաեւ Կիրանցի այլ տարածքում՝ «Խաչի յալ» հատվածում:

Այս տարի կառավարությունն իրականացնում է աշնանացան ցորենի մշակությանն աջակցելու ծրագիր, աշնանացան ցանողներին՝ յուրաքանչյուր հեկտարի հաշվով տրվում է 80 հազար դրամ աջակցություն: Սակայն այդ աջակցությունն էապես չի ավելացնի Կիրանցում ցանվող աշնանացանի հեկտարները: Բնակիչները մեզ հայտնեցին, որ «Դզեր» տարածքում՝ Հայաստանի տարածքում է գտնվում խորհրդային ժամանակ Կիրանցի հարեւան ադրբեջանական Խեյրիմլի գյուղի գերեզմանատունը: Կիրանցի բնակիչները մտավախություն ունեն, որ Ադրբեջանը կարող է պահանջներ ներկայացնել Հայաստանի տարածքում անօրինական ստեղծված գերեզմանատան տարածքի հանդեպ: 2024թ. սեպտեմբերի 2-ին Նիկոլ Փաշինյանը Կիրանցի նորակառույց դպրոցում հայտարարեց. «Ես ուզում եմ պատասխանատու կերպով ասել, որ Հայաստանի անկախության պատմության մեջ երբեք Կիրանցում դպրոց գնալն ավելի անվտանգ չի եղել, քան այսօր, երբեք Կիրանցում ապրելն ավելի անվտանգ չի եղել, քան այսօր: Եվ սա շատ կարեւոր արձանագրում է»:

Չգիտենք, թե ինչ նկատի ունի երկրի վարչապետն «անվտանգ» ասելով, բայց բոլորը կարող են արձանագրել, որ սահմանազատման անվան տակ Կիրանցի հողերն Ադրբեջանին հանձնելուց հետո գյուղի արոտավայրերը նվազել են, գյուղում պահվող խոշոր եղջերավոր անասունների թիվը մոտ 40 տոկոսով նվազել է: Սահմանազատումը նաեւ Կիրանցի բնակչության մոտ որոշակի նյարդային լարվածություն է առաջացրել: Ադրբեջանին հանձնված հողերի դիմաց դրանց սեփականատերերից դրամական փոխհատուցումն արվել է գաղտնի ընթացակարգով, հայտնի չէ, թե գյուղի բնակիչներից ովքեր եւ ինչքան տարածքի համար պետբյուջեից որքան ֆինանսավորում են ստացել: Գյուղի 7 բնակիչ, որոնց հարազատները զոհվել են Կիրանցի պաշտպանության մարտերի ժամանակ, սկզբունքային են գտնվել եւ հրաժարվել են դրամական փոխհատուցում ստանալուց: Այս առումով դրամական փոխհատուցում ստացածների ու չստացածների միջեւ էլ որոշակի տարաձայնություններ են ծագել:

2024թ. ամռանը Կիրանցի հարեւան Աճարկուտ գյուղի «Սերգեյկուտ» տարածքում Կիրանցի բնակիչների քեֆի ժամանակ Կիրանցից մի տղամարդ կենաց ասելիս թունդ հայհոյել է բոլոր նրանց, ովքեր հերոսների արյունով պաշտպանված հողերն Ադրբեջանին հանձնելու համար դրամական փոխհատուցում են ստացել եւ գրավոր հրաժարվել սեփականության իրավունքով իրենց պատկանող հողերից: Կենաց ասողի եղբայրը զոհվել է Կիրանցի պաշտպանության ժամանակ: Քեֆի մասնակիցների մեջ եղել են նաեւ հանձնված հողերի դիմաց դրամական փոխհատուցում ստացածներ, սակայն ոչ ոք չի հակադարձել կոշտ կենաց ասողին:

2024թ. սեպտեմբերի 1-ին պետբյուջեից 615 միլիոն դրամով կառուցված Կիրանցի դպրոցի նոր շենքը գործարկվեց: 100 աշակերտի համար նախատեսված դպրոցում այժմ սովորում է 37 աշակերտ: Վերջերս Կիրանցի դպրոց այցելած վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հանրային խորհրդի անդամներին հավաստիացրել է, որ Կիրանցում կառուցվող տների շնորհիվ աշակերտների թիվը կավելանա: Մինչ դպրոցի նոր շենքի կառուցումը Կիրանցում լուրեր էին տարածված, թե նորակառույց հիմնական դպրոցը միջնակարգ է դառնալու, Կիրանց գյուղի բարձր դասարանցիներն այլեւս Սարիգյուղի եւ Ներքին Ծաղկավանի միջնակարգ դպրոցներ չեն գնալու: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրինք՝ Կիրանցի հիմնական դպրոցը ե՞րբ է ստանալու միջնակարգի կարգավիճակ: Մարզպետարանից պատասխանել են. «Կիրանցի հիմնական դպրոցը միջնակարգ դպրոցի կարգավիճակ ստանալու հարցում հստակ ժամանակ չենք կարող նշել»:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՅԴՊԵՍ Է ՎԱՐՎՈՒՄ ԱՆԳԱՄ ԻՐ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԻ ՈՒ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ



Նոյեմբերի 2-ին Նիկոլ Փաշինյանը կրկին փորձեց հակաեկեղեցական ակցիա իրականացնել՝ ռեւանշ վերցնելով Արագածոտնի Սուրբ Հովհաննավանքում կազմակերպած կեղծ պատարագի տապալման դիմաց, սակայն եթե նախորդ կիրակի հավաքվել էր մի քանի հազար մարդ, ապա վերջին միջոցառմանը 500-1000 մարդ էր ներկա, եւ պարզ էր, որ այդ ռեսուրսով Վեհարանը գրոհել եւ Վեհափառին վռնդել հնարավոր չէր լինի: Ինչո՞ւ մարդիկ չարձագանքեցին նրա կոչին, ո՞րն է լինելու նրա հաջորդ քայլը. զրուցել ենք ԱԺ նախկին ՔՊ-ական պատգամավոր **Սոֆյա Հովսեփյանի** հետ:

- Կիրակի օրվա տեսարանը Հովհաննավանքում իշխանության համար, կարելի է ասել, ողբերգական էր: Կարգալույծ Ստեփանը կրկին պատարագ մատուցեց, իշխանության ներկայացուցիչները ծունկ չոքեցին նրա առաջ, հաղորդություն ստացան, հետո Փաշինյանը որոշեց հաջորդ պատարագն անցկացնել Թալինում՝ եկեղեցուց հեռացած մյուս հոգեւորականի մատուցմամբ:

- Մարդկանց մեջ արհեստական վախ էին ներշնչել, եւ մարդիկ նախորդ շաբաթ ստիպված մասնակցում էին այդ «պատարագին», բայց մեր ժողովուրդն աստվածավախ է, եւ կարծում եմ, որ այդ հանգամանքը նույնպես խանգարեց մարդկանց՝ մասնակցելու այդ չարի ծիսակատարությանը: Այս անգամ միայն ՔՊ վերնախավի ներկայացուցիչներն էին մասնակցում: Դե, նրանք Աստված չեն ճանաչում, եւ իրենց համար լրիվ նորմալ է: Վերջում մնալու են լրիվ իրենք իրենցով, իրենց պատգամավորներով ու մարզպետներով: Ակնհայտ է, որ անգամ մի շարք պատգամավորներ ներկա չէին այդ ծաղրուծանակին: Նրանցից շատերը մտածում են, որ այս ընթացքում արդեն իսկ այնքան շատ մեղքեր են գործել, որ սրանից շատ չեն գործի:

- Իսկ Ստեփան Ասատրյանի վերջը ո՞րն է լինելու: Ի վերջո՝ Հովհաննավանքը Մայր Աթոռի սեփականությունն է, եւ, ինչպես տեսնում ենք, հաջորդ կիրակի Փաշինյանը Թալինում է անցկացնելու: Նախկին հոգեւորականին ինչ ճակատագիր է սպասվում՝ Ձեր կարծիքով:

- Ստեփան Ասատրյանի հետ լինելու է այն, ինչ լինում է ցանկացած օգտագործված եւ շպրտված իրի հետ: Նա փաստացի օգտագործվեց եւ ուզի, թե ոչ՝ դեն է նետվելու: Ու որքան էլ նրան արդարացնեն, ասեն՝ դե, ստիպված էր, ինչ աներ եւ այլն, իրականում նա գիտակից, հասուն մարդ է, ճեմարան է ավարտել եւ բոլորիցս լավ գիտի, թե ինչ է նշանակում լինել կարգալույծ: Բայց եթե այդքանից հետո էլ կանգ չի առնում, դա մի բան է նշանակում, իրոք կորսված մարդ է: Նա մնալու է մենակ եւ մեկուսացած բոլորից: Արդեն իսկ նրա արտաքինից ու դեմքի արտահայտությունից երեւում է, թե որքան վատ վիճակում է, թեպետ ունի իշխանության աջակցությունն այս պահին: Խաղ է՝ ջրի երեսին ժամանակավոր մնալու համար, շուտով անցնելու է ջրի տակ…. նա ջրի երեսին կմնա այնքան, որքան պետք է Նիկոլ Փաշինյանին: Հետո կդառնա անպետք իր: Կոպիտ է հնչում, այո, բայց Նիկոլ Փաշինյանն այդպես է վարվում անգամ իր թիմակիցների ու նախկին ընկերների հետ, ովքեր իրեն պետք չեն գալիս: Պետք է կարողանալ պահել արժանապատվությունը եւ չմտնել կեղտոտ խաղերի մեջ: Ով չկարողացավ ու գայթակղությանը տրվեց, մինչեւ վերջ ստորանալու է:

- Քանի որ հակաեկեղեցական այս արշավը չստացավ համաժողովրդական աջակցություն, ինչ եք կարծում՝ դեռ որքա՞ն կարող է շարունակվել եւ ինչ հանգուցալուծում կարող է ստանալ:

- Ժամանակ են վերցնելու՝ պաուզա, որպեսզի նորից գործի անցնեն եւ քայքայեն Եկեղեցին: Սրանք եթե մի բան քայքայելու նպատակ են դնում, հետ չեն կանգնում: Ամեն ինչ կուրանան, անգամ՝ ընտանիք, երեխա, բայց իրենց ուզածին կհասնեն: Ինքներդ էլ տեսաք, որ մի շրջան պաուզա էին վերցրել, հետո սկսեցին սրբազաններին բանտարկել, դրանից հետո այլ խաղ են սկսել, որն այժմ մարում է, արդյունքում դադար կվերցնեն նորից եւ կփորձեն Եկեղեցի ներխուժելու այլ ճանապարհ գտնել: Այնպես որ, հոգեւոր դասն ու հավատացյալ շրջանակները պետք է զգոն լինեն, որովհետեւ սրանք չեն հանդարտվելու: Պետք է մնալ կուռ ու ամուր, որի արդյունքում մի օր անպայման ազատվելու ենք եւ սրանցից, եւ սրանց նպատակներից:

- Փաստացի, Նիկոլ Փաշինյանը չունի հանրային աջակցություն: Ինչն է խանգարում նրան վարչապետի պաշտոնից հեռացնելուն:

- Խանգարում է անցյալի փորձը: Մարդիկ ունեն վախեր: Փաշինյանն այս տարիների ընթացքում ժողովրդին կերակրել է այն միտքը, որ նախկին իշխանությունները ցանկանում են վերադառնալ: Մարդիկ էլ այդ վախից առաջ չեն շարժվում, բայց եթե մի նոր ուժ հայտնվի՝ նոր պայքարի մեթոդներով, մարդիկ ճիշտ ընտրություն կկատարեն եւ Փաշինյանին կհեռացնեն: Վստահ եմ, որ նոր ուժ ձեւավորվելու է: Հայ ազգը կորսված չէ: Նախորդ ընտրություններում էլ Նիկոլը չէր հաղթելու, եւ մարդկանց մասնակցության թիվը չէր լինելու մեծ, բայց քանի որ քիչ մասնակցություն եղավ, հաղթեց նախկին-ներկա խաղը: Այժմ չի հաջողվելու նման բան: Մարդիկ ուզում են ազատվել այս պատուհասից:

Մկրտված է, բայց մկրտության վայրն ու քավորը գաղտնիք են

Նիկոլ Փաշինյանի ամուսնության քավոր, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը հակաեկեղեցական պայքարի առաջամարտիկներից է: Նա Նիկոլ Փաշինյանի եւ այլ պաշտոնյաների հետ երկու անգամն էլ մասնակցել է Օհանավան գյուղի Հովհաննավանքում կատարվող պատարագին, որն իրականացնում էր կարգալույծ արված քահանա Տեր Արամը, ավազանի անունով՝ Ստեփան Ասատրյանը: Դրանով մարզպետը ոչ միայն Նիկոլ Փաշինյանին իր հավատարմությունն է հայտնում՝ մարզպետի պաշտոնի եւ երկարամյա ընկերության համար, այլեւ մասնակցում է Հայ առաքելական եկեղեցու եւ կաթողիկոսի դեմ սկսված արշավին: Մեզ հետաքրքրում էր՝ արդյո՞ք նա Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ է, թե՞ որեւէ այլ եկեղեցական հոսանքի է հարում: Հոկտեմբերի 27-ին մարզպետ Հ. Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Դուք Հայ առաքելական սուրբ եկեղեցու հետեւո՞րդ եք: Եթե այո, ո՞ր թվականին, ո՞ր եկեղեցու, ո՞ր քահանայի ձեռամբ եք մկրտվել, ո՞վ է եղել Ձեր մկրտության կնքահայրը»: Մարզպետի աշխատակազմից ինձ պատասխանել են. «Մարզպետը Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ է, մկրտված է: Մյուս հարցերի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ, համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի, անձնական տվյալները հրապարակման ենթակա չեն»: Թե ինչ կապ ունի «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, եւ ինչու են մկրտության վայրն ու քահանան անձնական տվյալ՝ մեզ պարզ չեղավ: Իսկ մարզպետի կնքված լինել-չլինելն ինչո՞վ անձնական տվյալ չէ, որ այդ հարցին պատասխանել են, իսկ մյուս հարցերին՝ ոչ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՇՄԱՎՈՆ ԱԹՈՅԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՈՐԵՎԷ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՆԹԱՏԵՔՍՏ ՉԿԱ

Մոտ 10 օր առաջ ՁԼՄ-ները գրեցին գիշերը Դավթաշենում հնչած կրակոցների մասին, որի հետեւանքով մահացել էր 33-ամյա բլոգեր Շմավոն Աթոյանը: Գործ հարուցեցին, մարդ ձերբակալեցին՝ 30-ամյա մի երիտասարդի: Եվ ահա, երեկ համացանցում լուրեր տարածվեցին, թե այդ երիտասարդն ընդամենը զոհ է, եւ Շմավոն Աթոյանն է այլ անձանց հետ մոտեցել նրան ու ծեծի ենթարկել, նա էլ ինքնապաշտպանվել է՝ կրակոցներ է արձակել հարձակվողների ուղղությամբ:

Երեկ համացանցում իշխանական ՁԼՄ-ները նյութեր էին տարածում՝ փորձելով կատարվածին քաղաքական երանգ հաղորդել, շեշտում էին, որ ՔՊ-ական Աթոյանն իր ելույթներում ակտիվ քննադատում էր «Մեր ձեւով» շարժումը: Ակնարկն ուղղված էր Սամվել Կարապետյանի շարժմանը, որը, փաստորեն, ըստ այդ հրապարակումների, նաեւ մարդկանց հետ է հաշվեհարդար տեսնում՝ քննադատության համար:

Թե ով ում վրա է հարձակվել, եւ վարկածներից որն է մոտ իրականությանը, Քննչական կոմիտեից հրաժարվում են մեկնաբանել՝ պատճառաբանելով նախաքննության գաղտնիությունը: «Դեպքը տեղի է ունեցել հոկտեմբերի 25-ին: Սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով (սպանությունը) եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով (հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը): Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը», - փոխանցեց ՔԿ խոսնակ Կիմա Ավդալյանը:

Զրուցեցինք նաեւ սպանության մեջ մեղադրվող կալանավորված երիտասարդի պաշտպանի՝ **Հայկ Ալումյանի** հետ, որը կտրականապես բացառեց քաղաքական ենթատեքստը: «Ով որ քաղաքական ենթատեքստ է գտնում, չարաչար սխալվում է»,- ասաց նա: Ճի՞շտ է, որ անձնական հողի վրա է եղել սպանությունը, ինչ-որ աղջկա պատճառով: «Ես շատ բան չեմ կարող ասել: Նախաքննական գաղտնիքն այնքան լայն հասկացություն է, որ մարդ աշխատում է մի քիչ քիչ ասի, քան մի քիչ ավելին: Բայց այն մարդիկ, ովքեր այս գործի մեջ որեւիցե քաղաքական ենթատեքստ են փնտրում, երեւի ուրիշ զբաղմունք չունեն: Որեւէ կապ չունի ո՛չ այդ շարժման հետ, ո՛չ այդ տղայի բլոգեր լինելու կամ քաղաքական որեւէ թեմայի հետ կապ չունի: Շուտով այնպիսի մանրամասներ հայտնի կդառնան այս գործից, որ որեւէ մեկի մոտ կասկած չի մնա, որ քաղաքական ենթատեքստ չկա: Ուղղակի հիմա ժամանակից շուտ եմ համարում այդ մասին ավելի մանրամասն տվյալներ ներկայացնելը, քանի որ նախաքննական գաղտնիքի խնդիր կա»:

Հայկ Ալումյանը հաստատեց՝ այո, իր պաշտպանյալը գործել է ինքնապաշտպանությունից ելնելով: «Դրանում չկա որեւէ կասկած, եւ շուտով կլինեն այնպիսի նյութեր, որ ոչ մեկի մոտ այդ առումով կասկած չի մնա»,- ասաց պաշտպանը:

Ուսումնասիրեցինք Շմավոն Աթոյանի ֆեյսբուքյան էջը եւ գտանք բավականին ագրեսիվ գրառումներ՝ հասցեագրված քաղաքական հակառակորդներին, նաեւ՝ Ամենայն հայոց կաթողիկոսին, որին անվանել էր սրբապիղծ: Բայց դա մեզ որեւէ հիմք չի տալիս ենթադրելու, որ նրա քննադատության թիրախներն են սպանության հետեւում կանգնած:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՍԵՂԱՆ

ՆԻԿՈԼԻ ՉԱԽՉԱԽՆ ԻԲՐ ՏԵՂՆ ԷՐ, ԱԼԻԵՎՆ ԷԼ ՁԱՂԱՑԸ ՏԱՐԱՎ

Օգոստոսի 8-ի եռակողմ «մեծ» փաստաթղթի ստորագրումից հետո Ալիեւի ախորժակը նկատելիորեն բացվել է: Նա այլեւս չի խոսում սահմանազատման ու սահմանագծման ճանապարհով Հայաստանից ինչ-որ կիսատ-պռատ հողակտորներ ճանկելու մասին: Սկսել է ամբողջական բաներ պահանջել, օրինակ՝ Սեւանը, ինչու ոչ՝ հետագայում նաեւ ամբողջ Հայաստանը: Դիմել է հայերին, թե դուք մեզնից մի վախեցեք, մենք կվերադառնանք ու միասին կապրենք մեր պապերի հինավուրց հայրենիքում: Կվերականգնենք մեր գյուղերի ու քաղաքների հին անունները, կով ա, ոչխար ա, բան ա, կպահեք, կապրեք: Ապագա Հայաստանի ղեկավարի պահով էլ ոչինչ չի ասել: Հավանաբար մտածում է՝ Բաքվից կնշանակի մեկին ու դրանով հարցը կլուծի վերջնականապես:

Ալիեւի այս կարգի հոխորտանքներին մենք, կարելի է ասել, արդեն սովորել էինք: Անսովորն այն է, սակայն, որ Ալիեւը տարածքային պահանջներ է ներկայացնում, այն էլ՝ այսպիսի լկտիությամբ, հաշվի չառնելով օգոստոսի 8-ի վերոնշյալ փաստաթուղթը, որ Նիկոլի հետ իր կոտրած ձեռքով է ստորագրել: Էն, որ Թրամփի ճանապարհը վերանվանեց «Զանգեզուրի միջանցք», դեռ ոչինչ, բայց դու տես, որ Սեւանն էլ է ուզում, Հայաստանն էլ, դեռ իր ժողովրդին էլ բերել Երեւան: Ահա, այսպիսի փորձանք…

Նիկոլն էլ, հակառակի պես, ժամանակ չունի Ալիեւի պորտը տեղը դնելու: Վեհարանը Վեհի, հայ բուդուր, պատարագ… Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու դեմ պայքար է առաջնորդում մարդը, ինչ Ալիեւի ժամանակն է… Համ էլ՝ Ալիեւն ասաց, հո հենց վաղը չարթ՞ց: Կխոսի, կխոսի, հետո կտեսնի, որ իրենից ավելի լավին չի ճարում, կսկսի աջակցել, որ վարչապետի աթոռին էլի ինքը մնա: Ընտրություններ են առջեւում, Ալիեւը մահապարտ հո չի՞, որ թողնի Հայաստանում իշխանության գան «ռեւանշիստներն» ու պահանջեն զորքերը հանել Հայաստանից: Եթե էդքան տղա էր, թող Հայաստան գար, բա ինչո՞ւ չեկավ… Վախեցավ, այո, որ «ռեւանշիստները» ցույց կանեն իր դեմ, կբացահայտեն իսկական դեմքը, քամուն կտան իր բոլոր «խաղաղասիրական» մտքերը:

Էն էլ կա, որ Նիկոլը հարմար տեղ չունի՝ մի լավ միջոցառում կազմակերպելու եւ Ալիեւին պատասխանելու համար: Ալիեւն իր վերջին հայտարարություններն արել է Ադրբեջանի գիտությունների ակադեմիայում, գիտնականների մեծ շրջապատում, իսկ Նիկոլը ո՞չ գիտությունների ակադեմիա է թողել, ո՞չ գիտնական, ո՞չ էլ մեծ շրջապատ: Գիտության հետ նրա վերջին շփումը Գյուղակադեմիան փակելու ժամանակ է տեղի ունեցել: Ակադեմիկոս, պրոֆեսոր, դոցենտ… Բոլորին հավասարեցրեց իրեն, դարձրեց ականջները կտրած ՔՊ-շնիկ: Ինքը կարող է, շատ-շատ՝ մի սիմֆոնիկ նվագախումբ հավաքել գլխին ու այդ համերգի ընդմիջմանը ոտքի վրա մի քանի բառ «փոխանցել» Ալիեւին:

Ինչեւէ, Ալիեւի՝ Սեւանի եւ Հայաստանն ադրբեջանցիներով բնակեցնելու մասին հայտարարություններից հետո Նիկոլենք շոկի մեջ էին ու չգիտեին ինչ անել: Ալեն Սիմոնյանն ու Ռուբեն Ռուբինյանը մի երկու խայտառակ բառ արտանետեցին եթեր ու միայն այդքանը: Ալենը հայ ժողովրդին հորդորեց չվախենալ, քանի որ Ալիեւը տանկի անուն չի տվել, իսկ Ռուբոն էլ Ալիեւին հորդորեց՝ ոչ թե հետ գնալ պատմության խորքերը, այլ առաջ գնալ: Հա, Պապիկյան Սուրենն էլ ձեւ տվեց, թե չի լսել Ալիեւի հայտարարությունները: Առայժմ՝ այսքանը: Մի քանի ժամ հետո, սակայն, պարզվեց, որ ՔՊ-ն ոչ միայն լսել է Ալիեւի հայտարարությունները, այլեւ՝ դրանցից հետեւություններ արել: Նրանց աչքում, ընդամենը մեկ երեկոյի ընթացքում, փուլ էր եկել Նիկոլի ամենակարողության մասին առասպելը: Հանկարծ պարզվել էր, որ այն, ինչ ասել ու արել էր Նիկոլը 2018 թվականից այսկողմ, ամբողջը բլեֆ է եղել, հանցագործություն, մատնություն, դավաճանություն… Իրենք էլ՝ այդ ք.քի մեջ: Ի՞նչ հեղափոխություն, ի՞նչ «հաղթանակ», ի՞նչ Թրամփի ուղի, ի՞նչ խաղաղություն, ի՞նչ իրական Հայաստան, ի՞նչ այլընտրանքային քահանա… Ամբողջը բլեֆ է, բլեֆ ու բլեֆ: Ալիեւին հաջողվել էր նախաբուն տային մթնոլորտ ստեղծել ՀՀ իշխանությունների մեջ: Նիկոլի արածների համար պատասխան տալու հեռանկարն այնքան պարզ էր ներկայացրել Ադրբեջանի նախագահը, որ այլեւս տեղ չէր թողել վերընտրվելու՝ նրանց երազանքներին:

Այստեղ արդեն արժանին պետք է մատուցել Նիկոլ Փաշինյանին: Կներեք, բայց շան հոտառություն ունի եւ իսկույն գործի անցավ՝ ՔՊ-ի ներսում հնարավոր բունտը ճնշելու համար: Ալիեւի հետ նույն երեկոյան հայտարարեց, որ դիմել է ՔՊ վարչությանը՝ իրեն ընդգրկելու առաջիկա խորհրդարանական ընտրությունների ՔՊ նախընտրական ցուցակում: Նիկոլի այս հայտարարությունը սառը ցնցուղի էֆեկտ ունեցավ ՔՊ-շնիկների վրա… Ուրեմն դեռ ամեն ինչ կորած չէ, դեռ մինչեւ հունիս կարող են լափ ճարել կերակրատաշտում, իսկ դրանից հետո՝ որտեղ կտրի կապը… Առաջին ուշքի եկողներից մեկն Ալեն Սիմոնյանն էր, որ կրկնօրինակեց Նիկոլի հայտարարությունը ցուցակում ընդգրկվելու մասին… Տեսեք, տեսեք, մենք քաջ ենք, հավատում ենք մեզ ու մեր գործին… Կհանգստացնե՞ն ՔՊ-ին այս հայտարարությունները, կկարողանա՞ն նրանք հանդարտություն պահպանել՝ չեմ կարող ասել: Ամեն ինչ այս պահին Ալիեւից եւ իրավապահներից է կախված: Մեր իրավապահները լսե՞լ են Ալիեւի հայտարարությունները, ի՞նչ են մտածում այս պահին Նիկոլի մասին, որ դեռ երեկ իրենց աստվածն էր: Էն Արման Բաբաջանյանի նկատմամբ քրեական վարույթ նախաձեռնելը լավ քայլ էր: Թող այսպես աստիճանաբար մոտենան Նիկոլենց տներին, ուրիշ ճանապարհ չկա, գուցե դեռ կկարողանան քավել իրենց մեղքը Հայրենիքի ու հայ ժողովրդի առաջ: Հարգելի իրավապահներ, եթե ձեր մեջ դեռ մի էսքան հայի ոգի կա, ապա չեղյալ արեք բոլոր շինծու գործերը, բանտերից ազատեք խելացի մարդկանց: Այդ դեպքում միայն մենք կկարողանանք ինչպես հարկն է պատասխանել Ալիեւին ու տեր կանգնել մեր կործանվող պետությանը:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄՇԱԿԱԾ «ԹԱԿԱՐԴ» ՕՊԵՐԱՑԻԱՆ ՏԱՊԱԼՎԵԼ Է

Փաշինյանը գործում է իբրեւ փորձված ահաբեկիչ՝ պատանդ է վերցնում Ամենայն հայոց կաթողիկոսի ազգականներին, բարեկամներին, թեմերի առաջնորդներին եւ նրանց ազատության դիմաց փրկագին պահանջում. փրկագնի դերում կաթողիկոսական աթոռն է: Որքան Ամենայն հայոց կաթողիկոսը համառում է, այնքան Փաշինյանը մեծացնում է պատանդների քանակը, որ ճնշումն ավելի մեծ լինի: Սկզբում կալանավորեց եւ կեղծ մեղադրանքներով ազատությունից զրկեց Տավուշի եւ Շիրակի թեմի առաջնորդներին: Տեսնելով, որ Գարեգին Բ կաթողիկոսը շարունակում է դիմադրել, շինծու քրեական գործ սարքեց նրա քրոջ որդու՝ Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի դեմ: Նախորդ օրն էլ մի շինծու, կեղծ մատնությամբ կալանավորեց կաթողիկոսի եղբորը՝ Գեւորգ Ներսիսյանին, եւ եղբորորդուն՝ Համբարձում Ներսիսյանին: Հաջորդը կարող է լինել կաթողիկոսի մյուս եղբայրը՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը, եթե ժամանի Երեւան:

Մոսկովյան մեր աղբյուրը տեղեկացնում է, որ մինչեւ Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանին կալանավորելը Փաշինյանը Քննչական կոմիտեի հետ մշակել է «Թակարդ» օպերացիան, որի նպատակը եղել է Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանին խաբեությամբ Հայաստան բերելը եւ նրան կալանավորելը: Քննչական կոմիտեն Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդին ծանուցագիր է ուղարկել, որով նրան հրավիրել են Հայաստան՝ ինչ-որ քրեական գործով ցուցմունք տալու, Ներսիսյանն այդ գործով ունեցել է վկայի կարգավիճակ: Ներսիսյանը հակված է եղել Հայաստան գալուն, սակայն նրան խորհուրդ են տվել չհավատալ Քննչական կոմիտեին, հասկացնելով, որ վկայի կարգավիճակն ընդամենը պատրվակ է՝ նրան Հայաստան բերելու, որից հետո անպայման կալանավորելու են: Ներսիսյանը հետեւել է խորհրդին եւ չի ընդունել այդ հրավերը: Երբ Փաշինյանը կալանավորել է կաթողիկոսի քրոջ որդուն, եղբորը եւ եղբորորդուն, բացելով խաղաքարտերը, նա հաջորդիվ հրահանգ է տվել Քննչական կոմիտեին՝ մի քրեական գործ էլ հարուցել Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի դեմ: Վերջինս արդեն ստացել է համապատասխան ծանուցագիր, որով տեղեկացվել է իր դեմ հարուցված քրեական գործի մասին, որտեղ ներգրավված է արդեն որպես մեղադրյալ: Հիմա նա հաստատ չի գա Հայաստան, որովհետեւ Հայաստան գալը կնշանակի հայտնվել մյուս թեմերի առաջնորդների, իր կալանավորված եղբոր եւ եղբորորդու կողքին:

Ենթադրվում է, որ հաջորդիվ Փաշինյանը կհրահանգի Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի նկատմամբ միջազգային հետախուզում հայտարարել եւ Ռուսաստանի իշխանություններից պահանջել, որ նրան հանձնեն Հայաստանի իշխանություններին: Ռուսաստանի իշխանությունները դա չեն անի, ինչը Փաշինյանին եւ նրա հպատակներին հնարավորություն կտա հայտարարել, թե սա հերթական անգամ ապացուցում է, որ Ամենայն հայոց կաթողիկոսի հետեւում կանգնած են Ռուսաստանի իշխանությունները եւ հատուկ ծառայությունները, եւ նրա գործունեությունը վտանգում է Հայաստանի անկախությանը եւ ինքնիշխանությանը, եւ այդ սպառնալիքը պետք է վերացվի:

Ո՞ւմ կարող է հաջորդիվ կալանավորել Փաշինյանը. գուցե Ամենայն հայոց կաթողիկոսի քրոջը՝ Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի մո՞ր: Քննչական կոմիտեն մի մեղադրանք էլ նրա վրա կհորինի, օրինակ՝ այն, որ նա տեղյակ է եղել իր որդու՝ Արագածոտնի թեմի առաջնորդի գործած հանցանքների մասին եւ թաքցրել է դրանք: Հետո կանցնի կաթողիկոսի եղբոր ընտանիքի անդամներին, հարսներին եւ երեխաներին կալանավորելուն: Փաշինյանն ուզում է, որկաթողիկոսին հրաժարական պարտադրի. պարզվում է՝ նրան կալանավորելով հարցը չի փակվում: Եկեղեցու կանոնագրքին ծանոթ մեկը նկատում է, որ, ըստ կանոնագրքի, Մայր Աթոռը գտնվում է այնտեղ, որտեղ գտնվում է Ամենայն հայոց կաթողիկոսը: Այսինքն, եթե Փաշինյանը կաթողիկոսին կալանավորի եւ տանի ԱԱԾ մեկուսարան, Մայր Աթոռը Էջմիածնից ինքնաբերաբար կտեղափոխվի ԱԱԾ մեկուսարան: Իսկապես կլինի փաշինյանավայել՝ 10 միլիոն հայ հավատացյալների հոգեւոր կենտրոնը՝ ԱԱԾ մեկուսարանում:

Տեղի կտա՞ կաթողիկոսն ահաբեկչի պահանջներին: Ճնշումն աննախադեպ է, կաթողիկոսի քրոջ որդին՝ Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանն առողջական խնդիրներ ունի, տառապում է շաքարային դիաբետով, եղբայրը՝ Գեւորգ Ներսիսյանը, սրտի վիրահատություն է տարել եւ նույնպես գտնվում է բժշկական մշտական հսկողության տակ: Փաշինյանը, իհարկե, գիտի դրա մասին եւ հակամարդկային այդ գործողություններով փորձում է անելանելի վիճակի մեջ դնել կաթողիկոսին: Բայց ո՞վ է ավելի մեծ հանցագործ՝ ահաբեկի՞չը, որ փորձում է անբարո, հակամարդկային քայլերով հասնել իր ուզածին, թե՞ նա, ով ընդառաջ է գնում ահաբեկչին, կատարում նրա պահանջները՝ նրան խրախուսելով եւ դրդելով նոր հանցագործությունների:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԳՆԵՐԸ ԵՐԿՆԻՇ ԹՎԵՐՈՎ ԵՆ ԱՃԵԼ՝ ՆՈՒՅՆԻՍԿ 2025 Թ. ԱՌԱՋԻՆ 9 ԿԱՄ 10 ԱՄԻՍՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ, ԻՆՉԸ ԹԱՔՑՆՈՒՄ ԵՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՑ

«Հրապարակի» զրուցակիցը տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թաթուլ Մանասերյանն** է:

- Իշխանությունը հերթական անհասկանալի որոշումն է «երկնել»: 200 հազար դրամ աշխատավարձ ստացող ՀՀ քաղաքացին, որի տարեկան եկամուտը կազմում է 2 մլն 400 հազար դրամ, 2026թ. հունվարի 1-ից պարտադիր վերադարձնելու է 765 հազարը՝ հարկերի եւ առողջապահական ապահովագրական վճարների տեսքով: Փաստորեն, աշխատող քաղաքացին իր վաստակի գրեթե

կեսը փոխանցում է պետությանը: Մոտենում ենք 50/50-ին:

- Նույն սկզբունքով պետք է սկսել հարկել իշխանական ամենաբարձր օղակներից եւ նրանց հարազատներից, ովքեր ծնողներ ունեն եւ անմիջական հարազատներ, որոնք կարող են այդ գումարներով գոյատեւել: Եվ, իհարկե, համեմատել սպառողական զամբյուղի հետ, թեեւ պարենային նվազագույն զամբյուղն էլ շատ չի ծածկվում, ունենք աշխատող աղքատներ:

- Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը հայտարարել է, թե 2026 թ. հունվարի 1-ից հետվճարի սահմանաչափերը վերանայվելու են. գործող 12 տոկոսի փոխարեն սահմանվելու է 20 տոկոս, որի արդյունքում կենսաթոշակները միջինում բարձրացվելու են 3000-3500 դրամով, իսկ քաղաքացիները, որոնք ստանում են նպաստ ու կենսաթոշակ՝ կատարելով անկանխիկ առեւտուր, հենց իրենք են բարձրացնելու իրենց կենսաթոշակներն ու նպաստները: Խոսքն անկանխիկ գործարքներից հետվճար ստանալու մասին է: Շարքային քաղաքացուն կարո՞ղ եք ավելի պարզ ներկայացնել իրականությունը:

- Արսեն Թորոսյանը, էկոնոմիկայի եւ ֆինանսների նախարարները եւ մնացած բոլորը՝ Աժում գործող տնտեսագետները, ինձ համար կապ չունի՝ իշխանական, թե ընդդիմադիր թեւից, պետք է հստակ հաշվարկներ անեն: Իմ համոզմամբ, կենսաթոշակառուն, հատկապես ձմռան ամիսներին, իր կենսաթոշակի «առյուծի բաժինը» տալիս է կոմունալ ծառայությունների համար՝ ուղիղ վճարներ կատարելով: Ուրեմն տեսեք, թե որքան է մնում կենսաթոշակառուին՝ սնունդ հայթայթելու, նաեւ հաշվի առեք, որ կոմունալ վճարների համար հետվճար չկա: Այսինքն՝ խաբեություն է նաեւ մինչ այսօր, մինչեւ այս խոստումը՝ կապված 3000-3500 դրամով բարձրացման հետ, իրականում կենսաթոշակառուն նման հավելյալ գումար չի կարող ստանալ, որովհետեւ իրական ծախսերը բնավ հետվճարի ենթակա չեն:

- Նույն Արսեն Թորոսյանը պնդում է, թե Հայաստանում այս պահի դրությամբ հնարավոր չէ բարձրացնել կենսաթոշակները՝ հաստատելով ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի հայտարարությունը: Վերջինս նշել էր՝ եթե կենսաթոշակները բարձրացնեն այնքան, որ ֆիսկալ անկայունություն առաջանա երկրում, եւ բյուջետային, հարկաբյուջետային խնդիրներ լինեն, ապա ոչ միայն կենսաթոշակառուները, այլեւ բոլորը վատ կապրեն: Որտե՞ղ է հակասությունը:

- Իրականում հակասություններն այսօր չեն առաջացել: Հակասություններ կան իշխանության ներսում՝ հասկանալու, ըմբռնելու ամենատարրական իրողությունները, որոնք տնտեսագետներն իրենց ուսումնառության առաջին տարում, առաջին կուրսում են հասկանում: Հիշեցնեմ, որ էկոնոմիկայի եւ ֆինանսների նախարարները չեն կարողանում հասարակ մի հարցի՝ պետական պարտքի վերաբերյալ նույն ցուցանիշն ու նույն թիվն ասել: Այսինքն՝ բանիմացության լուրջ խնդիր ունենք մեր երկրում, եւ եթե աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարը երբեմն մոռանում է, որ իր ղեկավարած գերատեսչության անվանման մեջ կա «աշխատանք» եզրույթը, դրա վերաբերյալ մտահոգություն, կարծես, չկա: Ե՛վ մյուս նախարարները, եւ օրենսդիր մարմնում պատասխանատու հանձնաժողովի ղեկավարներն ու անդամները պետք է հասկանան, որ այս հակասությունն իրականում բնավ էլ հակասություն չէ, որովհետեւ պետք է սովորեն մի պարզ բան. գերակայություններ, առաջնահերթություններ սահմանել պետական բյուջեում եւ «խրախճանքի» ծախսերը, իրականում «զբոսաշրջության» վերածված գործուղումները, տարբեր միջոցառումների համար անհիմն վատնվող գումարները կարող են գնալ կենսաթոշակների, ինչպես նաեւ նվազագույն աշխատավարձի ռեալ բարձրացմանը՝ հիշելով, որ խախտում են 2006 թ. ընդունված «Նվազագույն կենսապահովման զամբյուղի մասին» ՀՀ օրենքը: Իսկ դրանում ասվում է, որ նվազագույն աշխատավարձի եւ կենսաթոշակի հիմքում պետք է ընկած լինի նվազագույն կենսապահովման զամբյուղի հաշվարկը: Ոչ միայն ոտնահարվում է օրենքը, այլեւ չի հրապարակվում դրա մասին, թեեւ նախատեսվում է, որ պետք է պաշտոնական հրապարակում լինի յուրաքանչյուր տարվա հունիսի վերջին կամ հուլիսի սկզբին:

- Իրեն հարգող ցանկացած պետություն, իշխանություն, ի թիվս այլնի, հստակ սահմանում է իր տնտեսական քաղաքականությունը: Մինչդեռ ներկայիս իշխանությունների օրոք ոչ միայն տնտեսական քաղաքականություն չենք տեսնում, տնտեսական կայունություն եւ զարգացման նախադրյալներ ու հեռանկարներ չկան, այլեւ Հայաստանում գերաղքատություն է: Ինչպե՞ս պայքարել այս «աղետի» դեմ:

- Իշխանությունները չեն ներկայացնում տնտեսական քաղաքականությունը, որն այս տարիներին նրանց ղեկավարման օրոք բազմաթիվ գործոններով պետք է շտկվեր, ավելի հստակ դառնար, նաեւ՝ տարածաշրջանային զարգացումների, Արցախի կորստի եւ այլ գործոնները հաշվի առնելով: Նրանք ձախողել են կառավարության՝ իրենց իսկ ներկայացրած ծրագիրը բոլոր կետերով: Եվ իմ բազմաթիվ հորդորները, որ պետությունը պետք է ունենա զարգացման տեսլական, չկա: Պատկերավոր ասած՝ որ «ոտքի վրա արթնանան» իշխանավորները, այդ տրամադրությամբ ներկայացրածը «սուրճի մրուրի մեջ գուշակություններ են», որովհետեւ որեւէ մեկը չի կարող հոդաբաշխ բացատրել, թե ինչ գերակայություններ կան, եւ ինչպես պետք է զարգացնել տնտեսությունը, հեռանկարում ինչ կապիտալ ծախսեր են լինելու, ինչ Հայաստան ենք ուզում ստեղծել: Այս ամենը պակասում է՝ իշխանության ներկայացուցիչների բանիմացության եւ փորձառության բացակայության պատճառով: Վերջին 3 տարիներին Հայաստանի տնտեսությունը «գոյատեւում» է եւ այդ «աճը» գրանցում է մեծ մասամբ, եթե չասենք՝ բացառությամբ, ռուս-ուկրաինական հակամարտության հաշվին: Որովհետեւ վերաարտահանումն ուղղակի «փուչիկի» պես բարձրացրեց, ակտիվացրեց տնտեսական ցուցանիշը: Չմոռանանք նաեւ, որ վերջին տարին գյուղատնտեսությունն անկում է ապրում, թեեւ ինչին աճ են ներկայացնում: Իրականում կհասկանաք՝ ինչ ողբալի վիճակում է մեր տնտեսությունը՝ հաշվի առնելով, թե գյուղատնտեսական արտադրությունն ինչ ռեսուրսներ ունի, վարելահողերի գրեթե 70 տոկոսը չի օգտագործվում:

- Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) կանխատեսում է, որ Հայաստանի տնտեսությունը 2025-ի վերջին կաճի 4.8%-ով, մինչդեռ այս տարվա ապրիլին ԱՄՀ-ն ՀՀ-ի համար կանխատեսել էր 4.5% տնտեսական աճ: Բացի այդ, ԱՄՀ-ի վերլուծաբանների կանխատեսմամբ, 2025-ին Հայաստանում գնաճը կհասնի 3.3%-ի, իսկ 2026 թվականին՝ 2.8%-ի: Որքանո՞վ են այս թվերն արժանահավատ:

- ԱՄՀ-ն այսօր նեղ մտածողությամբ եւ կարծրատիպերով առաջնորդվող իր փորձագետներով կանխատեսումներ է անում, որոնք բազմիցս ձախողվել եւ չեն իրականացել: Հիշեցնեմ, որ տարիներ առաջ նրանք զրոյական, նույնիսկ՝ բացասական կանխատեսում էին արել, մինչդեռ իմ կանխատեսածը 3-4 տոկոս աճ էր, որը տեղի ունեցավ: Նաեւ գործ ունենք քաղաքականացված գնահատականների հետ, որոնք ես կանխատեսումներ չեմ կարող համարել: Հայաստանի իշխանությունները, ոչ միայն՝ այսօրվա, ուշադրություն չեն դարձնում՝ ձեւավորելու կամ օգտագործելու տեղի փորձագետների եւ կամ վերլուծական կենտրոնների ներուժը, որոնց կանխատեսումները շատ ավելի իրատեսական են: Ինչ վերաբերում է գնաճին, ապա դա եւս խաբուսիկ ցուցանիշ է, եթե սպառողական գների ինդեքսն են ներկայացնում, դրանք մոտ 500 ապրանքատեսակների գների միջինացված տատանումներն են: Տարիներ շարունակ հորդորել եմ կառավարությանը՝ հրապարակել առաջին անհրաժեշտության 10 ապրանքների եւ ապրանքախմբերի գնաճի վերաբերյալ տեղեկատվություն, ինչը չի արվում: Իսկ այդ գները երկնիշ թվերով են աճել, եթե վերցնենք նույնիսկ 2025 թ. առաջին 9 կամ 10 ամիսների ցուցանիշները, որոնք չեն ներկայացվել: Այնպես որ, հանրությանը պետք է ներկայացնել ճշմարտությունը, իսկ այդ ճշմարտությունը ներկայացնողները պետք է լինեն բանիմաց մարդիկ:

Արա ԱԼՈՅԱՆ

ՈՒՇ, ՀՈՒՍԱՄ՝ ԲԱՅՑ ՈՉ ՈՒՇԱՑԱԾ ՆԱՄԱԿ ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆԻՆ

ԷՍՍԷ

Սիրելի Արմինե, վաղուց քեզ չեմ գրել, չնայած առանց իմ գրի էլ թերթդ հրաշալի է: Շատ էի զբաղված ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀԱՅԻ ճակատագրի փնտրտուքներով, եւ հոգիս խռով էր, ու միտքս՝ թափառ, քանզի դժվար էր Թումանյանից, Դեմիրճյանից, Սարոյանից եւ մյուս մեծերի՝ հային բնութագրող խոսքից հետո, դժվար էր շատ նոր խոսք ասել…

Թող Մեծերն ինձ ներեն, բայց կարծես ինձ հաջողվեց գտնել իմ խոսքը՝ հատկապես մեր ժամանակներում, երբ բանտերը լցվում են լույսով, իսկ մեր ապրած կյանքում լույսը շարունակ պակասում է, եւ մենք կարծես թե սկսել ենք խարխափել մեր ազգի վրա իջնող-ծանրացող խավարում:

Հասկացա նաեւ, որ մենք կորցրել ենք ի վերուստ մեզ տրված գաղտնի գիտելիքների բանալին ու փնտրելով շարունակ չենք գտնում: Եվ Հավերժական Հայի անհանգրվան հոգին հորդում է մեր ներսում եւ չի կարողանում տեղավորվել մեր անցողիկ մարմնի մեջ…

Մեր շքամուտքի բաց դռնից անսպասելի ներս խուժեց թափվող տերեւների երամը, եւ ես հասկացա, որ այս տարվա աշունն է հաստատվում իմ մեջ, եւ տրտմություն իջավ հոգուս: Ու այդպես, սիրելի Արմինե, որոշեցի գրել քեզ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀԱՅԻ մասին, ում շարունակ փնտրում եմ:

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀԱՅԸ

Նվիրում եմ Ամենայն Հայոց Հայրապետին՝ Գարեգին Երկրորդ Կաթողիկոսին

Հայը անմահության ճանապարհի գերի է, միշտ պատրաստ է զոհվելու, բայց արի ու տես, որ մեռնել, անհետանալ չի ուզում:

Լինելով աշխարհի ամենահին ազգերից մեկը կամ ամենահինը՝ երբեք արյունակից-ցեղակից ազգություններ չունեցավ, մնաց մենակ: Հիմա էլ է մենակ ու չհասկացված, չճանաչված: Մենակ է ու աշխարհից խռոված, շարունակ արդարություն պահանջող, ումից է պահանջում, չգիտի, գուցե՝ աշխարհից համայն, բայց չի ձեւակերպում՝ որ աշխարհից, մյն, որ իրեն թվում է քաղաքակիրթ: Այնինչ ամենահին ու քաղաքակիրթ ազգը ինքն է:

Երբ Եղիշեն 1500 տարի առաջ մարդու՝ իր հավատով ապրելու իրավունք ու խղճի ազատություն էր պահանջում պարսիկներից, այնինչ քաղաքակիրթ Արեւմուտքն այդ արեց ընդամենը 100 տարի առաջ: Եվ այսօր մոռանալով իր քաղաքակիրթ անցյալը՝ շարունակ ուրիշից է պահանջում, եւ զարմանալին այն է, որ ինքն իրենից չի պահանջում:

Աշխարհի ժողովուրդների մեջ առաջինն ընդունեց քրիստոնեությունը՝ ավերելով իր հնագույն տաճարներն ու հնագույն գիրը: Ջնջելով հնագույն աստվածներին՝ սկսեց եկեղեցիներ ու տաճարներ կառուցել՝ ձոնված Հիսուս Քրիստոսին: Չուզեցավ քրիստոնյա մյուս եկեղեցիների հետ ներդաշնակվել, ինքն իրեն անվանեց հայ քրիստոնյա եւ դարձյալ մնաց մենակ իր Քրիստոսի եւ իր Աստծո հետ:

Շատ է սիրում եկեղեցի կառուցել ու կառուցում է մենակ: Ինչ է ուզում, որ իր անունն անմահանա, չէ՞ որ ինքը չի սիրում մեռնել-անհետանալ անհիշատակ: Մտնում է իր կառուցած եկեղեցին՝ աղոթելու, բայց ում է աղոթում՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի՞ն, Հայր Աստծո՞ւն, վառվող մոմի՞ն, Սուրբ Հոգո՞ւն, թե՞ Աստծուց այն կողմ գտնվող Անհայտ-Անվախճանին՝ մտքում զգուշավոր մտածելով՝ իսկ Աստծուն ո՞վ է ստեղծել, ո՞վ ստեղծեց շարժումը ու սկիզբ դրեց ժամանակին:

Հայի ամբողջ ապրած կյանքը չգիտակցված ուխտագնացություն է դեպի այնտեղ, ուր գտնվում է իր Չճանաչածը, ուստի նա իր ճանապարհին Աստծո հետ առնչվում է առանց միջնորդի:

Հայի միտքը ծանր է, ծանր է խոսքը, ծանր է քարը, որով նա եկեղեցի կամ տուն է կառուցում, ծանր է գերեզմանը, որը նույնպես քարից է կառուցում, քանզի ինչ անում է, բնազդով դա քայլելն է հավերժության եզրով, առնչվել անվախճանականությանը: Նա անմահությունն է երազում՝ հուսալով, որ քարի մեջ հավերժություն կա:

Հայն իր երկրի օրենքը միշտ չէ, որ հարգում է, որովհետեւ ինքն իրեն է համարում լավագույն օրենսդիրը:

Հայն ունի երեք սրբություն՝ իր ընտանիքը, Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Անճանաչելի Հավերժականը՝ Արարատ լեռան պատկերով. Ար-ար-ատ, այսինքն՝ ուր ավարտվում է Աստծո արարչագործությունը:

Հայն իր բնույթով նվաճող չէ, բայց իր ունեցած երկիրն իրեն շարունակ նեղ է թվում: Հավերժության ձգտող հոգին չի տեղավորվում մարմնի մեջ: Եթե ուրիշ ազգերն իրենց կյանքի ճանապարհներն ընտրում են հնարավորությունից դեպի իրականություն, ապա հայն ընտրում է անհնարինից դեպի իրականություն: Ինչու՝ ինքն էլ չգիտի:

Չի ուզում ուրիշների արանքում լինել կամ հետեւել մեկին, ինքը գնում է միայնակ՝ իրենից առաջ չունենալով ոչ մեկին: Իրենից առաջ տեսնելով միայն Հավերժականին: Ուստի եւ մնում է չհասկացված, չճանաչված, մնում է մենակ, ինչպես եւ այսօր է մենակ:

Հայը զգայուն աշխարհում չի ապրում, այլ ապրում է գերզգայուն աշխարհում, որը հավերժական է ու չի փոփոխվում: Հայը գերզգայուն աշխարհի ճամփորդ է, որի ավարտը չի երեւում: Եվ հայը գնում է այնտեղ ոչ թե հասկանալու Աստծո ստեղծած աշխարհը, այլ՝ թե ով ստեղծեց, ծնեց Աստծուն: Չէ՞ որ ինքը Աստծո հետ առնչվում է առանց միջնորդի: Հավերժական Հայը մարգարե չի ընդունում, ոչ էլ Աստծո փոխանորդ՝ երկրի վրա: Եվ քրիստոսազգայաց իր Սուրբ եկեղեցու Հայրապետին հավատավոր հոտի Հովիվ է համարում եւ չվախենալով սրբապղծությունից՝ հաճախ դժգոհում է նրանից, դա կենցաղային հայն է …

Հավերժական հայը իր ներսում ապրող կենցաղային հայի հետ հաշտ չէ: Կենցաղային հայը թշնամիներ ունի եւ ատում է իր թշնամուն, հավերժական հայը վեր է ատելությունից, որովհետեւ ենթագիտակցական կյանքով է ապրում:

Հավերժական հայը թագավոր չի սիրում, որովհետեւ իրեն բարձր է համարում թագավորից՝ իր թագավորը ուրիշ մի տեղում է, ուրիշ չափման մեջ, կենցաղային հայը՝ սիրում է թագավոր, բայց չի սիրում ենթարկվել:

Հավերժական հայը արդարության գերի է, կենցաղային հայը ավելի զիջող է՝ արդարություն ասելով հիմնականում հասկանում է իր շահը եւ շարունակ ձգտում է իշխանության:

Հավերժական հայը քաջ է, չի վախենում զոհվելուց, չի մոռանում իր պատմության պանծալի էջերը, կենցաղային հայը պահանջատեր է եւ հավաքված հավերժական հայի դեմ՝ սուրճ խմելով բամբասում է քաջերին՝ թե ինչու, երբ ավելին կարող էին անել, բայց չարեցին:

Իսկ այդ ընթացքում հավերժական հայը Նարեկացի է ծնում իր միջից, ով ոչ թե վիճում է եկեղեցու, այլ վիճում է Աստծո հետ: Ու դժգոհում է, թե ինչու մարդուն կատարյալ չի ստեղծել եւ ինչու չի թողնում մոտենալ Իրեն ու շարունակ ուզում է Աստծուն մարդեղացնել եւ մարդուն աստվածացնել: Հավերժական հայը ստեղծում է Վահագնի Ծնունդը էպոսը, ուր պատմվում է աշխարհի արարումը, իսկ կենցաղային հայը ուրիշ ազգերի մեջ է փնտրում հնագույն իմաստնությունները:

Կենցաղային հայը չի գնում հերոսության, եւ եթե իր շահին պետք է, պարտությունն է համարում մեծ իմաստնություն, շարունակ իրեն շրջապատելով քծնողներով, սիրաշահողներով, քանի որ բնազդական վախ ունի հավերժական հայից: Կենցաղային հայը ապրում է անտեսիլք եւ մի օր մեռնում՝ աննկատ: Հավերժական հայն իր վսեմ գործով եւ դեռ չիրականացված երազանքների հետ անվերջ զոհվում է, նահատակվում, բայց չի մեռնում…

Ժամանակների մեջ այնպես եղավ, որ Արեւելքի մեծ զինվոր Լենկ Թեմուրը գրավեց նաեւ Հայաստանը, ավերեց, թալանեց պալատներն ու շեները, բայց իր բարբարոս զինվորներին արգելեց մտնել Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար, ինքն էլ չմտավ: Հավերժական հայը հիշում է այս պատմությունը, իսկ կենցաղային հայը չգիտի եւ նույնիսկ պատրաստ է ինքը ներխուժել Մայր Տաճար՝ չվախենալով սրբապղծությունից, ու վիրավորել Աստծո ծառայողներին…

Ե՞րբ եւ ինչպե՞ս եղավ այս ողբերգական պառակտումը մեր հնագույն ազգի մեջ: Ազգ, որի ենթագիտակցության մեջ իր կորցրած մեծ Երկրի պատկերն է՝ Ավետյաց Երկրի պատկերը, Երկիր, որտեղ առաջինը ձուլեցին երկաթը, պղինձն ու բրոնզը, առաջինը ստեղծեցին գինին ու գարեջուրը, առաջինը վարժեցրին վայրի ձիերին ու լծեցին մարտակառքին:

Եվ այդ նույն հայը հիմա իր տեղը չի գտնում, հեշտությամբ ներում է իր թշնամիներին ու շարունակ կռվում է ինքն իր դեմ: Գիտի, որ կորցրել է, բայց չի ձեւակերպում՝ ինչ, ու չի կարողանում գտնել եւ արդեն քանի հազար տարի շարունակում է խարազանել, նշավակել ինքն իրեն եւ իր ցեղին:

Այնինչ օտարների հանդեպ նա շատ բարի է, հյուրասեր, որ օտարը գոհանա ու գնա իր երկիր եւ գովի հային, այն հային, որն ինքն իր դեմ կռիվ ունի եւ չի էլ ենթադրում, որ իր կռիվն իր դեմ է, իրեն փրկել ցանկացող հավերժական հայի դեմ:

Եվ հիմա ես ձայն եմ տալիս ձեզ. ո՞վ է Հավերժական Հայի հետնորդը մեր մեջ՝ վսեմ տեսիլքի տերը, մեր կորցրածը վերադարձնողը, մեր ազգային արժանապատվության տերը,

թող ինքը ձայն տա, եւ նրա ձայնի արձագանքը թող ծավալվի, հնչի աշխարհի բոլոր հայոց եկեղեցիների զանգակատներում: Կանչի, հավաքի բոլորին Արարատ սրբազան լեռան առջեւ, որ աղոթքով երդվեն…

Թե ուրանամ Արարատ քեզ,
Թող կուրանա աչքն իմ…

ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՂՈԹՔԻ ՓՈԽԱՐԵՆ

Տե՞ր Աստված, ձեռքդ հովհանի արա Հային ու Հային: Փարատիր նրանց աչքերին իջած մլարը, որ իրենք, ինչպես իրենց ստեղծարար նախնիները, առնչվեն հավերժությանը, չմնան գետնաքար, ոտաց կոխան ամենքի, շտկեն իրենց ողնաշարը եւ այլոց դեմ կանգնեն արժանապատիվ եւ ճանաչեն իրար: Արա այնպես, որ չմոռանանք մեր հնագույն աշխարհաստեղծ նախակերպը, եւ զրկիր չարափառներին Քո Սուրբ անունը տալու իրավունքից եւ ներիր կենցաղային հայի մեղքերը, որպեսզի չլինի այնպես, որ օրվա ուտելիքն ավելի թանկ համարվի, քան հայրենիքը՝ ինչպես այսօր, ու արթնացրու նրա մեջ հավերժական հային, որ պիտի հզորացնի իր չարչրկված, բայց աստվածընծա հայրենիքը՝ Մարդու հայրենիքը…

Գթառատ եղիր, Տեր, ներիր մեր սխալները, եւ փռիր մեզ վրա քո փեշն անվախճանության, մի թույլ տուր, որ այլեւս գնանք դառնաղետ փորձություններին: Դիր ձեռքդ մեր սրտին, որպես փրկության կնիք, եւ հուշիր, Տեր, ճանապարհը, որ գտնենք քո իսկ ձեռքով մեզ տրված գաղտնի գիտելիքների բանալին:

Ներիր, Տեր, անմեղներին ու մեղավորներին, եւ խնդրում եմ՝ մի՛ մոռացիր նաեւ իմ մասին:

Մերուժան
ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆԱՔԱՆԴ «ԼՐԱՍՏԵՂԾԸ»

Bad news is good news. այս՝ լրագրողական աշխարհում ընդունված ասույթի իմաստը՝ «Վատ լուրը լավ լուր է», մի քանի իմաստ ունի: Նշանակում է նաեւ, որ որեւէ խնդրի բացահայտումն ու լուծումն ավելի արժեքավոր են, քան այն անտեսելը կամ միայն լավ լուր

Արա ԱԼՈՅԱՆ

լսելը: Իսկ լրագրողների շրջանում նշանակում է, որ բացասական իրադարձությունները հաճախ ավելի մեծ ուշադրություն են գրավում եւ ավելի «ձեռնտու» են, քան՝ դրականները:

Ժամանակակից աշխարհում, այդ թվում՝ նաեւ Հայաստանում, քրեական, ողբերգական, անվտանգային եւ այլ մտահոգիչ երեւույթների մասին լրատվության պակաս չկա: Եվ դրանք, ցավալիորեն, տիրաժավորվում են նաեւ հենց «վատ լուրը լավ լուր» է «շեշտադրումներով», իսկ մեր դեպքում, որ առավել վտանգավոր է, նախկին լրագրող, վարչապետի աթոռը «զավթած» Նիկոլ Փաշինյանի անմիջական նախաձեռնությամբ եւ կատարմամբ: Ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ Փաշինյանը կարող է լավագույնս տեղեկացված լինել այս լրագրողական փիլիսոփայությանն ու հնարքներին, մարդ, որը, կամա-ակամա, վերջին 7 տարիներին դարձել է հայաստանյան իրականության թիվ 1 Newsmaker-ը, ասել է թե՝ լուր, օրակարգ ստեղծողը-սահմանողը:

Իմիջմեյքերի եւ լրաստեղծի «հակադրությունում», պարզ է, չէ՞, որ Փաշինյանն առավելապես «հաջողակ» է Օրվա թեման, Օրվա Լուրը հրապարակ նետելու հարցում: Նա սկանդալային լուրերի ստեղծման հարցում անմրցելի է. դեռ ընդդիմադիր գործիչ եղած ժամանակ անդրադառնալով 2008-ի մարտիմեկյան իրադարձություններին՝ նա անկեղծորեն խոստովանեց. «Ես հպարտ եմ, որ քաղաքացիների դիմադրությունն եմ կազմակերպել, պատիվ ունեմ հետագայում նույնպես նման գործունեություն ծավալել եւ էսօրվա իմ գործունեությունը համարում եմ դրան ուղղված գործողություն: Էն դերակատարումը, որ մարտի 1-ին ունեցել եմ, դա իմ կյանքի ամենամեծ հպարտությունն է»: Հիշեցնենք, որ Նիկոլ Փաշինյանը դատապարտվել է 2008թ. մարտի 1-ին զանգվածային անկարգություններ կատարելու մեղադրանքով, իսկ իր իշխանության գալուց հետո՝ արդարացվել: Այդ օրը դիմելով Մյասնիկյանի արձանի մոտ հավաքված բազմությանը՝ նա ասում էր. «Ես ձեզնից յուրաքանչյուրին կոչ եմ անում՝ ունենալ ձեռքին ինչ-որ բան՝ ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար՝ կլինի փայտ, կլինի քար կամ չգիտեմ ինչ»: Այնուհետ հավելում էր. «Չեք պատկերացնում, տղերք, հոգիս ոնց էր փառավորվում, երբ իմացա, որ ոստիկանների ձեռքից վահաններ ու մահակներ եք խլել»: Ավելի ուշ, Արցախը թշնամուն հանձնած Փաշինյանը հայտարարեց, թե չի վիրավորվում, երբ իրեն թուրք են անվանում: Հայաստանին, Արցախին եւ բովանդակ հայությանը մինչեւ այսօր սպառնացող գոյաբանական մարտահրավերների, մեզ համար անընդունելի եւ ցավալի որոշումներն էլ ՀՀ վարչապետի աթոռին նստածը ներկայացնում է այնպիսի խրոխտ ու հաղթական տոնով, այնպիսի անթաքույց բերկրանքով, ասես եզակի շանս ու նվաճում են, որի մետաստազները հասնում են հարեւան ու ոչ բարեկամ Ադրբեջան՝ ողողելով այդ երկրի իշխանական, փորձագիտական եւ լրատվական դաշտերը:

Ինչ-որ առումով, Նիկոլը հավակնում է նաեւ իրեն մեծապես սատարող Բաքվում դառնալ «լրաստեղծ» ֆիգուր՝ թեկուզ ավելի նվազ նշանակությամբ: Ի դեպ, փաշինյանական վարքագծի եւ «վատ լուրը լավի տեղ մեզ վրա վաճառելու» նրա հնարքներն ակնհայտ են ամենուր. հայկական ավանդական կոնյակի՝ «հայկական չլինելու», չայի ջրով գունավորված յաթրջի արաղի մասին նրա պնդումից մինչեւ Ղազախստանից «Վրաստանով» ՀՀ ներմուծվող հացահատիկի մասին դիֆերամբներն ուղղված են Ալիեւին, որից կանոնավորապես ստանում է իր «տնային առաջադրանքները»:

Փաշինյանը փորձագետ է օդում, ջրում եւ ցամաքում: Բայց նա, անշուշտ, միամիտ չէ. Նիկոլը ժամանակին հասկացավ, որ իր ընտանիքի անդամներին, հատկապես՝ երեխաներին, պետք է հեռացնել մեդիայի տեսադաշտից, խոշոր պլանից տանելով ետին պլան: Եվ հիմա նրա երեխաներն այլեւս ստատուսներով չեն պատասխանում ընդդիմադիր գործիչներին, հարցազրույցներ չեն տալիս, ակտիվ չեն, եւ հանրությունն ու մամուլն էլ նրանց շատ չի «նկատում»: Բայց Փաշինյանի յուրաքանչյուր քայլը հաշվարկված է, յուրաքանչյուր խոսքը, ակտը՝ նույնպես, ընդհուպ ՀԱԵ-ի եւ մեր հոգեւոր հայրերի դեմ՝ այս օրերի համար անառարկելիորեն թիվ մեկ խնդրահարույց ու դատապարտելի արշավը: Եվ, այո, նա ոչ թե «ազգակործան պատուհաս է», ինչպես բնորոշել է նրա երբեմնի «գաղափարաքաղաքական կնքահայր», ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, այլ պետականաքանդ մեկը, որովհետեւ սկսեց սիրուց եւ հանդուրժողականությունից, բայց կարճ ժամանակ հետո անցավ Արցախի, արցախցիների եւ հայ ժողովրդի դեմ ատելության «արշավին»՝ հընթացս ձեւակերպելով «Իրական Հայաստան», «Չորրորդ հանրապետություն» ու նման զառանցագին եւ բովանդակազուրկ այլ կոնցեպցիաներ՝ իբրեւ պետության կազմաքանդման հիմք եւ ծրագիր:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 5.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՄԽԻԹԱՐՎԵԼ. ՓԱՇԱԶԱԴԵԻՆ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԱՆՏԵՍԵԼ ԵՆ

Շաբաթ օրը՝ նոյեմբերի 1-ին, հայաստանյան լրատվամիջոցներում լուր էր տարածվել այն մասին, թե իբր Ադրբեջանի կրոնական առաջնորդ Ա. Փաշազադեն (որին հընթացս վերագրվում է նաեւ Կովկասի մահմեդականներին առաջնորդելու գործառույթ) հանդիպել է Հռոմի Լեւոն XIV պապին: Այնուհետ, իբրեւ թե Փաշազադեն Պապին է փոխանցել Ադրբեջանի նախագահի եւ փոխնախագահի ողջույնները, նաեւ Պապին հրավիրել է Ադրբեջան՝ տեսնելու, թե այնտեղ ինչ կրոնական համերաշխություն է տիրում, եւ նման դատարկամտություններ:

Իհարկե, Իլհամ եւ Մեհրիբան Ալիեւների բարոյազրկությունը, ստախոսությունն ու լկտիությունը պետք է ունենալ, որ քրիստոնեության օրրան եղող Հայաստանի արցախյան հատվածի ազգաբնակչությանը տեղահանելուց, հազարամյա քրիստոնեական հուշարձանների հանդեպ ամեն վանդալիզմ ու բարբարոսություն գործադրելուց հետո գնաս Հռոմի Սրբազան Քահանայապետի մոտ ու քրիստոնեական արժեքների պաշտպանությանից, կրոնական հանդուրժողականությունից ճամարտակես: Երեւի Ալիեւներին թվում է, թե մնացյալ աշխարհում էլ ադրբեջանական գրաքննություն է, լրատվամիջոցները չեն հաղորդում, հանրությունն էլ անտեղյակ է մնում Ադրբեջանում գործադրվող հակաքրիստոնեական ու հակամշակութային վայրագություններին:

Շաբաթ օրն էլ, ահա, ադրբեջանական լրատվամիջոցներից արտատպելով՝ Հայաստանում տարածել էին, թե իբր Փաշազադեն է Հռոմի պապին հանդիպել եւ կրկնել Ալիեւների թեզերը: Պապն էլ իբրեւ ունկնդրել է վերջինիս դատարկախոսությունները: Իրականում, ադրբեջանցիների տարածած լուրի լուսանկարից արդեն իսկ պարզ էր, որ Պապը Փաշազադեին ամենեւին էլ չի ընդունել, ոչ էլ նրա հետ հանդիպել է: Հրապարակված լուսանկարի անտուրաժից տեսանելի էր, որ Վատիկանի տարածքում, դրսում ինչ-որ տեղ Փաշազադեն մոտեցել է Լեւոն XIV պապին: Դատելով լուրի տեքստից, Փաշազադեն Պապին կարողացել էր մոտենալ Սուրբ Պետրոս տաճարի հրապարակում կայացած միջեկեղեցական, միջկրոնական արարողությունից հետո, որի առիթով էլ, հավանաբար, ժամանել էր Վատիկան:

Բայց Սուրբ Պետրոսի հրապարակում անցկացվող զանգվածային միջոցառման առիթով Վատիկանում հայտնված Փաշազադեն ընդամենը մյուս հյուրերի թվում Պապի ձեռքն էր սեղմել եւ հեռացել, թե մի քանի բառ էլ դատարկախոսել էր, դեռ հարց է: Հարցի պատասխանը տալու էր Վատիկանի պաշտոնական կայքում տեղադրվող լրատվությունը նոյեմբերի 1-ի իրադարձությունների մասին: Ոչ միայն Վատիկանի պաշտոնական կայքում, այլեւ Vatican News-ում չէին տեղադրել որեւէ բառ Ա. Փաշազադեի հետ Լեւոն XIV պապի հանդիպման մասին:

Այնպես որ, Նիկոլ Փաշինյանը կարող է մխիթարվել, որ իր՝ Պապի հետ ունեցած հոտնկայս հանդիպման մասին Սուրբ Աթոռում գոնե մի նախադասություն գրվել էր: Փաշազադեին Վատիկանում առհասարակ անտեսել են, բառ անգամ չի հաղորդվել նրա հետ որեւէ հանդիպման, նույնիսկ վախենամ՝ Փաշազադեի՝ Վատիկանում գտնվելու մասին: Վատիկանում կարող են այդպես անտեսել եւ արհամարհել:

Իսկ Փաշինյանը, եթե Մայր Աթոռի հանդեպ իր բարբաջանքները, Վեհափառի հարազատների հանդեպ դիտավորյալ եւ հակաօրինական բռնությունները չդադարեցնի, ապա մի օր կարող է հասնել իր ազգանվանակից Փաշազադեի նման արհամարհվելու, ընդ որում՝ ոչ միայն Հայաստանում եւ հայության կողմից, ինչի ականատեսը վերջին երկու շաբաթում երկու անգամ եղավ Եկեղեցուց բռնազավթված ու պղծված Հովհաննավանքում, այլեւ միջազգային ասպարեզում՝ Փաշազադեի նման:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am